



ԱՄՍԱԳԻՐ

ԱԶԳԱՅԻՆ, ԲԱՆԱՍԻՐԱԿԱՆ, ԳԲԱԳԻՏԱԿԱՆ,
ՈՒՍՈՒՄՆԱԿԱՆ ԵՒ ՔԱՂԱՔԱԿԱՆ



ԵՐԿՈՏԱՍԱՆԵՐՈՐԴ ՏԱՐԻ

՝ 877


ՎՅԻՍ



ՄԶԿԻԹ ՕՄԱՐԱՅ (ՀԻՆ Տ. ՍՈՂՈՄՈՆԻ)

ՅԵՐՈՒՍԱՂԷՄ

Ի ՏՊԱՐԱՆԻ ՍՐԲՈՑ ՅԱԿՈՎԲԵԱՆՑ



ԲՆԱՍԱՆԵՐՈՒՄԻ ՏԱՐԻ
ԹԻՒ 5.

ԱՄՍԱԳԻՐ

ՄԱՅԻՍ 31
1877.

ԱԶԳԱՅԻՆ . ԲԱՆԱՍԻՐԱԿԱՆ . ԳՐԱԳԻՏԱԿԱՆ
ԵՒ ՈՒՍՈՒՄՆԱԿԱՆ

ԿԱՐԵՒՈՐՈՒԹԻՒՆ ՈՒՍՄԱՆ

Ս. ԳՐՈՏ

Քննեցէք զգիրս :

ՓԵՏՐՎԱՐԻ ամսաթերթին մէջ
«Ընտրութիւն ընթերցանութեան մէջ»
վերնագրով մեր մի յօդուածով բա-
ցատրեցինք թէ մարդոյ ընթերցասի-
րութեան եւ ուսանելու առարկայից
մէջ առաջին տեղը պէտք է Ս . Գրքը
գրաւէ իբրեւ բարձրագոյն հեղինա-
կութիւն բարոյական և իմաստասիրա-
կան ուսմանց եւ իբրեւ անմիջական
պէտք մարդոյ՝ թէ անհատական և թէ

ընկերական բարեկեցութեան և եր-
ջանկութեան . մեր սոյն յօդուածով
եւս պիտի ապացուցանենք նոյն բա-
ցատրութեան ճշմարտութիւնը եւ
հաստատութիւնը թէ Ս . Գրքէն ,
թէ մարդկային անհատական կենաց
քննութենէն և թէ՛ հին հեթանոսա-
կան և արդի քրիստոնէական աշխար-
հի ընդհանուր բաղդատութենէն :

Ա.

ՍՈՒՐԲ ԳԻՐԲԷՆ

Հարկ է որ Ս. Գիրքն ամեն քրիստոնէի հանապազօրեայ ընթերցանութեան և հետաքննութեան առաջին առարկայն լինի, այն պատճառաւ՝ որովհետեւ Աստուծոյ ամենասուրբ կամաց յայտնութեան, նորա աւանդած ամենարդար օրինաց և պատուիրանաց և առ հասարակ նորա կենսաբուխ և լուսատու վարդապետութեանց աւանդապահ կտակագիրն է եւ զօրս ուսանելու և ըստ այնմ կենցաղավարելու համար Աստուած պարտաւորած է զմարդ թէ նոյն իսկ իւր ամենասուրբ բերանով և թէ իւր հաւատարիմ ծառայից Ս. Մարգարէից և Առաքելոց միջոցաւ, որպէս զի ամեն Աստուածապաշտ և երկիւղած մարդ ուսանելով նորա միջոցաւ իւր Արարչին, իւր տիրոջ և իւր բարերարին ամենասուրբ կամբք, ըստ այնմ կարգադրէ իւր կեանքը և այն ամեն աստուածային խնամոց և բարերարութեանց փոխարէն՝ հաւատարիմ մնալով նմա, վայելէ իւր բոլոր կենաց շրջանին մէջ նորա պաշտպանութիւնը, օգնութիւնը և բարերարութիւնը, զորս խոստացած է հանապազ անպակաս առնել իւր հաւատարիմ ծառայից և որդւոց վրայէն։ Այս խոստման յայտնութիւնն ու գործադրութիւնը՝ Ս. Գրոց մէջ առաջին մարդոյ ստեղծագործութեան օրէն սկսեալ մինչեւ ներկայ ժամանակս շարունակ և զգալի նշաններով կատարուած է, կը կատարուի և պիտի կատարուի մինչեւ աշխարհի վերջին օրը։

Առաջին անգամ երբ կըստեղծէ Աստուած մարդկային Նախահայրը

յորմէ և նորա կենակիցն, հայրական քաղցրութեամբ կը յորդորէ զանոնք և կը խրատէ որ միշտ իւր աստուածային կամաց համեմատ՝ ուղղութեամբ վարելով իրենց կեանքը իրենց սահմանափակ աշխարհին մէջ, պահպանեն իւր աւանդած պատուէրը և հաւատարիմ մնան իրեն, և որպէս զի իւր այս առաջին աշակերտը կրթէ և վարժեցնէ իւր կիրքերը զսպելու և ապօրինի ցանկութիւնները խղճելու, նոմանաւանդ որ աւելի մեծն է ամեն բանէն առաջ Աստուծոյ կամաց հպատակութեան վարժեցնելու համար ըզնա՝ իւր հայրական քաղցր յորդորանաց հետ միասին կը յայտնէ նաեւ երկիւղալի սպառնալիքներ, որ եթէ մի միայն իւր սրտի ցանկութեան հետեւելով աստուածային պատուիրանաց դէմ գործել յանդգնի՝ ամենա սաստիկ պատժոյ պիտի ենթարկուի մահաւամբ փոխարինելով իւր պատուիրանագտնեցութեան յանցանքը։ Մարդկային կրից անյագ ցանկութիւնն եւ բռնութեամբ թափը քիչ ժամանակէն ցոյց կը տան իրենց առաջին փորձը եւ ի լոյս կընծայեն իրենց դառնութեան սրտաւոր, որ խիստ սաստիկ կը դառնա, ջրնէ այս առաջին միամիտ յանցանդաց անփորձ քիմքը եւ նոցա հոգին վշտով կը լեցնէ խսպառ. սակայն Աստուած իւր արդարութեան առաջին փորձը ապագայ աշխարհին ցոյց տալու համար անաջառութեամբ կը վարուի նոցա դէմ և ճշդիւ կը գործադրէ խոստացեալ պատիժը։

Այս ամենադառն պատիժը պէտք էր արդարեւ որ ապագայ սերունդին մի ամենամեծ փորձ լինէր Աստուծոյ արդարութեան և անաջառութեան. զոր յիշելով յարաժամ հարկ էր որ զգոյշ մնային նմանօրինակ զանցառութեան մէջ իյնալով նոյն արդարութեան

Թեան ծանրութիւնը իրենց վրայ եւս հրաւիրելէ, սակայն ընդհակառակն կը տեսնենք Ս. Գրոց պատմութենէն, որ այն նորաբողոք ապագայ սերունդն քիչ ժամանակէն զինի անձնատուր լինելով իսպառ իւր յախուռ կրից անզուսպ բռնութեան, կը մոռանայ և կ'արհամարհէ բողոքովն ոչ միայն այն բարերար և արդար Աստուծոյ պատուէրներն ու հրամանները, այլ և նոյն իսկ զԱստուած, իւր Արարիչը, Նախախնամողը և կեանքը ուրանալու ամբարշտութիւնը կ'ունենայ, որոյ անմիջական հետեւութիւնը կը լինի դարձեալ Աստուծոյ արդարութեան գործադրութիւնը համայնաբնից ջրհեղեղի միջոցաւ, յորմէ ազատ կը մնայ միմիայն արդարն Նոյ իւր ընտանեօք 'ի վարձ իւր հաւատարմութեան և երկիւղած Աստուածապաշտութեան:

Այլ ոսկայն այս ահարիւր կոտորածն ևս շատ շուտով մոռացութեան կը մատնուի և այն նոր նախահօր սերունդն եւս ցոյց կը տայ աշխարհի թէ մարդոյ յուր կիրքերն որոյիսի անսպառելի աղբիւրներ են չարեաց, եթէ անզուսպ և ապերասան ձգուին և թէ ամբարշտութեան հակամէտ մեղսասէր և անկիրթ մարդը քանի՞ դժուարին է յուզղութիւն բերել և մանաւանդ քանի՞ դժուարագոյն 'ի նմին պահել, Ծննդոց գիրքը արդէն մանրամասն կը պատմէ թէ Նոյի սերունդը ինչպէս կ'աճի, ինչ կեանք կ'ունենայ և Աստուծոյ դէմ ինչպէս կը վարուի, ուստի զանց ընելով այս մանրամասնութիւնը, կ'ըսկսինք մեր տեսութիւնը Աբրահամի ժամանակէն, որ Աստուծոյ ընտրեալ ժողովրդեան նախահայրն եղաւ և անկէ սիտաւ Աստուած շարունակաբար նորա եւ նորա որդւոց հետ ուղղակի բանակցիլ, աւանդելով նոյս հետզհետէ իւր օրէնք-

ներն ու պատուիրանները և պատուիրելով նոյս նոյնը աւանդել և ուսուցանել յորդւոց յորդի:

Երկրագնդիս վրայ գտնուած մարդկային աղբի այնքան բազմութեան մեջէն Աստուած միմիայն մէկ մարդ կը գտնէ իւր սրտին համեմատ, զոր առինքն կոչելով, կը խոստանայ հայր ընել զնա բազմութիւն աղբերու այն պայմանաւ, որ թէ ինքը միշտ հաւատարիմ մնայ իրեն և պահպանէ իւր աւանդած և աւանդելիք օրէնքներն ու պատուիրանները և թէ նոյնը իւր որդւոց ուսուցանէ և պատուիրէ « Եւ ասէ Աստուած ցԱբրահամ, բայց դու զուխտ իմ պահեսցես, և զաւակքոյն քո յատգս իւրեանց Կ. մեծահաւատ և երկիւղածն Աբրահամարդարեւ կը պահէ իւր հաւատարմութեան և հնազանդութեան ուխտը, որոյ փորձը մինչեւ անգամ իւր ծերութեան պըտուղ միածին որդին զհագործելու պատրաստութեամբ իսկ ցոյց տալով, կը հաճոյանայ Աստուծոյ և կ'օրհնուի անկէ անշուշտ աւելի այն պատճառաւ, որ Աստուած կը կարգայ նորա բարեպաշտ հոգւոյն մէջ Աստուծոյ հաւատարիմ մնալու կտակը իւր որդւոց եւս աւանդելու եւ զնոսա Աստուածապաշտութեան մէջ վարժելու իղձն ու փափաքը « Քանզի գիտէի եթէ պատուիրեսցէ որդւոց իւրոց եւ տան իւրոյ յետ իւր, պահել զճանապարհս Տեառն Կ. որուն համար կը յաւելու թէ « Եւ ամցէ Տէր 'ի վերայ Աբրահամու զամենայն բարիս զոր խօսեցաւ ընդ նմա Կ. և արգարեւ հաւատարմութեամբ պահելով Աբրահամ իւր ուխտը զոր և իւր որդւոյն աւանդելով կը պատուիրէ նմա նաեւ նոյնը առնել, այս յաջորդական աւանդութեամբ դալով կը հասնի մինչեւ Մովսէս մեծ Մարգարէին օրը միայն

բերանացի աւանդութեամբ. իսկ յետ
այնորիկ կըսկսին 'ի գիր արձանագրու-
ւիլ նոյն մեծ Մարգարէի միջոցաւ
որ Աստուծոյ ներշնչութեամբ ստեղ-
ծագործութենէ սկսեալ մինչ այն օրը
Աստուծոյ ամբողջ գործերը 'ի գիր ա-
ռնելով հետզհետէ անոնց կը շարացա-
րէ իւր ժամանակի ամբողջ պատմու-
թիւնը և յԱստուծոյ ընդունած ամեն
օրէնքներն ու պատուիրանները : Այն-
պիսի արդար օրէնքներ և օգտակար
կանոններ, որոց վրայ զմայլելով այս-
պէս կը խօսի նոյն Աստուածային հե-
ղինակն երկրորդ օրինաց Դ. գլխոյն
մէջ « Ո՞ր ազգն այնքան մեծ է, որ իմ
այսօր ձեզ ներկայացուցած օրէնքիս
նման արդար կանոններ եւ դատաս-
տաններ ունենայո՞ւ, ուստի յորդորելով
Խրայէլը որ միշտ հնազանդ և նախն-
ձախնդիր մնան այս Աստուածային օ-
րինաց եւ կանոնաց, խստիւ կը պա-
տուիրէ որ մեծ զգուշութիւն ընեն
դանոնք մոքէ չը հանելու, այլ միշտ
աչքի առջեւ ունենալով՝ իրենց բոլոր
կեանքը և ամեն գործառնութիւնները
անոնցմով և անոնց համեմատ ընել.
որպէս զի Աստուծոյ սիրելի մնան և
խոստացեալ բարիքները վայելեն « Հայ-
եաց 'ի քեզ և զգոյշ լեր անձինքում
յոյժ. մի մոռանայցես զամենայն բանս
զայնոսիկ, զորս տեսին աչքքո, և մի
մերժեսցին 'ի սրտէքումմէ զամենայն
աւուրս կենաց քոյդ ոչ այսչափ միայն,
այլ և կը սպատուիրէ յաջորդաբար ի-
րենց որդւոց եւս ուսուցանել զանոնք
« Եւ խելամուտ արասցես որդւոցքոյ
և որդւոց որդւոց քոյդ և կը յիշէ չը
մոռանալ այն օրը ուր հրամայած է
Աստուած : « Եկեղեցացո առ իս զժու-
ղովուրդդ և լուիցեն զպատգամս իմ.
զորս ուսուցից երկնչիլ յինէն զամենայն
աւուրս՝ որչափ կենդանի իցեն դոքա
'ի վերայ երկրի և ուսուցեն զորդիս

իւրեանցդ : Նոյնը կը կրկնէ ԺԱ. գլխոյն
մէջ աւելի ազգութեամբ « Եւ զի-
ջիք զբանս զայնոսիկ 'ի սիրտս ձեր և
յանձնս ձեր և արկջիք զնոսս նշան
'ի ձեռս ձեր և եղիցին անշարժ ա-
ռաջի աչաց ձերոց : Եւ ուսուցիք
որդւոց ձերոց խօսիլ զոսոս 'ի նստիլ
'ի տան, 'ի գնալ, 'ի ճանապարհի և 'ի
ննջել և 'ի յառնել, և դրեալիք զոսոս
'ի վերայ սեմոց տանց և 'ի դրունս
ձերդ : Եւ իբրեւ լրումն այս ամեն
յորդորանոց և խրատուց, և իբրեւ
վերջնական՝ կնիք կը յաւելու ԻՂԴ.
գլխոյն մէջ. « Եւ եղիցի եթէ լսելով
լուիջիք ձայնի Տեսան Աստուծոյ մե-
րոյ զգուշանալ և առնել զամենայն պա-
տուիրանն նորա զորս ես պատուիրեմ
ձեզ այսօր . . . եկեսցեն 'ի վերայ քո
ամենայն օրհնութիւնքս այսօրիկ . . .
օրհնեալ լիցիս դու 'ի քաղաքի և օրհ-
նեալ յանդի. օրհնեալ լիցին ծնունդք
որովայնիք և արդիւն երկրիք. ան-
դեայք արջառոց քոյ և հօտք ոչխա-
րաց քոյ . . . օրհնեալ լիցիս դու յե-
լանել և 'ի մտանելքում . . . և եղիցի
եթէ ոչ լուիցես ձայնի տեսան Աս-
տուծոյք. պահել և առնել զամենայն
պատուիրանն նորա զորս ես պատուի-
րեմ քեզ այսօր. եկեսցեն 'ի վերայ քո
անէծքս այսօրիք . . . անիծեալ լիջիր
դու 'ի քաղաքի և անիծեալ յանդի.
անիծեալ շտեմարանք եւ համբարք
քո. անիծեալ ծնունդք որովայնիք և
արդիւնք երկրիք և անդեայք առ-
ջարոց քոյ և հօտք ոչխարաց քոյ. ա-
նիծեալ լիջիր դու 'ի մտանել և անի-
ծեալ յելանել . . . » Եւ այսպիսի մե-
ծամեծ խոստամբ և սպառնալեօք կը
պատուիրէ Աստուած իւր մարգարէ-
լին միջոցաւ միշտ ուսանիլ և յորդւոց
որդի ուսուցանել և պահել իւր օրէնք-
ները և այս խոստացեալ թէ բարեաց
և թէ սպառնալեաց ամբողջ կատար-

ման մի կենդանի սպառնաց է Հրէից ազգի ամբողջ կեանքը, զոր կը ներկայացնէ մեզ այսօր Հին Կտակարանը մանրամասն պարագայիւր :


Ս. Գիրքը ուսանելու մասին թէ նոյն խի Աստուծոյ և թէ նորա Ս. Մարգարէից կողմէն Հին Կտակարանի մէջ եղած այս յորդորական և սպառնական պատուէրներէն զոտ նոր Կտակարանի մէջ եւս կը տեսնենք նոյնը կրկնուած շատ տեղ թէ նոյն խի Աստուծոյ կողմէն Յիսուսի բերնէն և թէ նորա Ս. Առաքելոց կողմէն : Յովհաննու աւետարանի Եք գլխոյն մէջ կը կարդանք, որ երբ Յիսուս շաբաթ օրը երեսուն և ութամեայ խեղճ անդամալոյժը կը բժշկէ՝ կեղծաւոր Հրէայք օրինաց կեղծ նախանձախնդրութեան պատրուակաւ կըսկսին ամբաստանել զնա և հալածել շաբաթը լուծելուն համար : խի Յիսուս ցրելով նոցա ամեն ամբաստանութիւնները կը հրաւիրէ զնոսա գիրքերը քննել և իմանալ թէ ո՞ր է ինք և ինչ է իւր գործըն ու պաշտօնը : « Քննեցէք զգիրքքանդի դուք նովաւ համարէք ունիլ զկեանս յաւիտենականս » :

Գարձեալ Յիսուս մեծատան և Ղազարոսի փոխաբերական առակով կը պատուիրէ մարդկան Ս. Գիրք կարդալ և անտի ուսանիլ յաւիտենական կենաց և տանջանաց նկարագիրը եւ յաւիտենական կեանքը ժառանգելու համար աշխարհի մէջ բարեոք ապրելու եղանակը : քանզի մեծատունը յաւիտենական տանջանաց մէջէն երբ կը խնդրէ Հայր Աբրահամէն Ղազարոսը վերստին աշխարհ զրկել, որպէս զի իւր եղբայրները յապաշխարութիւն հրաւիրէ : Աբրահամ կը պատասխանէ թէ նոքա Մովսէսը և մարգարէներն ունին այսինքն նոցա միջոցաւ աւանդուած Աստուծային օրէնքներն ու պատուի-

րանները : Թող զանոնք ընթեռնուն, թող զանոնք քննեն և անսնցմէ ուսանին ապաշխարելու եղանակը : Նիկողիմոս երբ Յիսուսին կը դիմէ գիշերով իւր հաւատքը յայտնելու և վերստին ծըննդեան համար չը կրնալով Յիսուսի ստածը իմանալ, անորմէ բացատրութիւն կը խնդրէ : Յիսուս կը պատասխանէ յանդիմանական կերպիւ թէ : « Դու վարդապետ ես Իսրայելի եւ զայդ ո՞չ գիտես » այսինքն թէ դու որ վարդապետ լինելով՝ հանապազ օրէնքները կարդալու, ուսանելու և քննելու պարտաւոր ես ինչո՞ւ համար ծուլացիր ես քու պաշտօնիդ մէջ և չես սովորեր այդ բաները : Առաքելոց մէջ եւս կը տեսնենք, որ առաքեալները երբ Թեսալոնիկէէն հալածուելով Բերիա կը փախչին այն տեղի մարդկանց վրայ դուրս թեամբ կը խօսին Ս. Գիրքերը կարդալ և քննելու մասին :

Այսպէս ուրեմն թէ Հին եւ թէ նոր Կտակարանները, թէ Աստուծոյ ինքնին և թէ իւր հաւատարիմ ծառայից միջոցաւ շարունակ պատուիրած են և կը պատուիրեն միշտ Ս. Գիրքը ընթերցասիրել, քննել եւ նոցա վարդապետութեանց բուն նպատակը իմանալ, վասնորոյ ամեն ճշմարիտ քրիստոնեայ, պարտաւոր լինելով հաւանդիլ Ս. Գրոյ հրամանաց, պարտաւոր է նաեւ ուրեմն հանապազ ընթեռնուլ Ս. Գիրքը բայց ի անտի ըստանալիք օգուտներէն, նաեւ Աստուծային հրաման մը կատարած լինելու համար :

(Շարունակելի :)



ԱՍՏՂԱԳԻՏԱԿԱՆ

ՓԱՅԼԱԾՈՒ Զ

Նախընթաց յօդուածով բացատրեցինք Փայլածուի հոլովումն ու թաւալումը, նորա արեգակէն և երկրէն ունեցած հեռաւորութիւնները, նոյն պէս իւր տրամագծին, մակերեւութին և ծաւալին տարածութիւնները: Այժմ ներկայիւս պիտի ամփոփեմք, ինչ որ ուսումնական աշխարհը գիտէ այս մոլորակի բնական կազմութեան վերայ, որովհետեւ այս հետաքրքրական եւ կարեւոր նիւթին վերայ գիտութեան հաւաքած տարերքները ամենուն համար հաւաստարարէս օգտակար են այն համանմանութեամբք և հականմանութեամբք, զոր մոլորակային դրութեան իւրաքանչիւր աշխարհն ունի մեր երկրի վերաբերութեամբ: Այն եղանակը, որով լոյսը ու ջերմութիւնը սրիւռուած են մոլորակային մարմնոց մակերեւութին վերայ, նոյա տուրջնեան եւ գիշերոյ եւ եղանակաց յաջորդութիւնը, մեր մթնոլորտին նման մթնոլորտի մի էութիւնը, կամ չէութիւնը, ի մի բան այն սրտահարները, զորս հեռագէտներով կը տեսնեմք մոլորակաց մակերեւութին վերայ, այնպիսի ճիշդ նշաններ են, որք կը ներեն մեզ մի քանի հաւանական կարծիքներ կազմել այն կենդանի էակաց գործարանաւորութեան վերայ, որք անշուշտ կը շէնցեն մոլորակները: Երեւակայութիւնը՝ այս դրական ծանօթութեանց վերայ յենած, անշուշտ կարող է աւելի յանդգնութեամբ դիմել այն ենթադրութեանց, որք ցարդ չեն մերժուած փորձիւ և բացատրութեամբք:

Փայլածուի արեգակէն ընդունած լուսոյն խտութիւնը, միջին հեռաւորութեան նկատմամբ, գրեթէ եօթնանգամ (6.670) աւելի է մեր երկրի ընդունածէն. այս է պատճառը, որ այս մոլորակը մեզ այնչափ վառվռուն կ'երեւի, և որուն նախնիք լուսաճաճակ մակդիրը կը տային: Որովհետեւ ճառագայթող ջերմութեւ օրէնքները ևս նոյն են լուսոյ օրինաց հետ, ուստի ինչպէս լոյսը, նոյնպէս ջերմութիւնը եօթնանգամ աւելի է Փայլածուին վերայ երկրի վերայ եղածէն: Գալով այս երկու աւտեղաց համաչափ ժամանակաց մէջ ընդունած ջերմութեան ամբողջ գումարներուն, հարկ է գիտնալ, որ այս կախումն ունի արեգակնային ճառագայթներուն դարձող մակերեւոյթներէն. ուստի պարզ հաշուով մի կը գտնեմք, որ Փայլածուի ընդունած ջերմութեան քանակը՝ երկրի ընդունածին 95 հարիւրորդն է:

Նկատմամբ այն ազդեցութեան, զոր արեգակնային լուսաւոր ճառագայթները կ'ընեն մեր աչաց վերայ, և զոր առանց ջաւի չեմք կարող տանիլ, և նկատմամբ այն ազդեցութեան զոր կը դիմեմք մեր բովանդակ մարմնոյն վերայ, երբ յագեալ է արեգակնային ջերմական հոսանքներէն, Փայլածուի բընական հոսանքներէն, Փայլածուի բընական հոսանքներէն, և կամ թէ նոյա դգայնութիւնը ունի արեգոք մեր կազմութեան, և կամ թէ նոյա դգայնութիւնը ունի արեգոք մերինին համահաւասար աստիճան մի. խնդիր մի է այս, որուն ոչ որ կարող է դրապէս պատասխանել. բայց ճշմարիտ է եւ այս, որ Փայլածուն վերի կրկին տեսութեամբ երկրէն աւելի կը ներդրի արեգակնային ջերմութենէն, թէեւ իւր երկարաձգուած ոլորտին պատճառաւ, մեք կը տեսնեմք, որ երբեմն կը հեռանայ արեգակէն և երբեմն կը մօտենայ և այս մեծագոյն և փոքրագոյն հեռաւորութեան նկատմամբ, գրեթէ եօթնանգամ (6.670) աւելի է մեր երկրի ընդունածէն. այս է պատճառը, որ այս մոլորակը մեզ այնչափ վառվռուն կ'երեւի, և որուն նախնիք լուսաճաճակ մակդիրը կը տային: Որովհետեւ ճառագայթող ջերմութեւ օրէնքները ևս նոյն են լուսոյ օրինաց հետ, ուստի ինչպէս լոյսը, նոյնպէս ջերմութիւնը եօթնանգամ աւելի է Փայլածուին վերայ երկրի վերայ եղածէն: Գալով այս երկու աւտեղաց համաչափ ժամանակաց մէջ ընդունած ջերմութեան ամբողջ գումարներուն, հարկ է գիտնալ, որ այս կախումն ունի արեգակնային ճառագայթներուն դարձող մակերեւոյթներէն. ուստի պարզ հաշուով մի կը գտնեմք, որ Փայլածուի ընդունած ջերմութեան քանակը՝ երկրի ընդունածին 95 հարիւրորդն է:

Նկատմամբ այն ազդեցութեան, զոր արեգակնային լուսաւոր ճառագայթները կ'ընեն մեր աչաց վերայ, և զոր առանց ջաւի չեմք կարող տանիլ, և նկատմամբ այն ազդեցութեան զոր կը դիմեմք մեր բովանդակ մարմնոյն վերայ, երբ յագեալ է արեգակնային ջերմական հոսանքներէն, Փայլածուի բընական հոսանքներէն, և կամ թէ նոյա դգայնութիւնը ունի արեգոք մեր կազմութեան, և կամ թէ նոյա դգայնութիւնը ունի արեգոք մերինին համահաւասար աստիճան մի. խնդիր մի է այս, որուն ոչ որ կարող է դրապէս պատասխանել. բայց ճշմարիտ է եւ այս, որ Փայլածուն վերի կրկին տեսութեամբ երկրէն աւելի կը ներդրի արեգակնային ջերմութենէն, թէեւ իւր երկարաձգուած ոլորտին պատճառաւ, մեք կը տեսնեմք, որ երբեմն կը հեռանայ արեգակէն և երբեմն կը մօտենայ և այս մեծագոյն և փոքրագոյն հեռաւորութեան նկատմամբ, գրեթէ եօթնանգամ (6.670) աւելի է մեր երկրի ընդունածէն. այս է պատճառը, որ այս մոլորակը մեզ այնչափ վառվռուն կ'երեւի, և որուն նախնիք լուսաճաճակ մակդիրը կը տային: Որովհետեւ ճառագայթող ջերմութեւ օրէնքները ևս նոյն են լուսոյ օրինաց հետ, ուստի ինչպէս լոյսը, նոյնպէս ջերմութիւնը եօթնանգամ աւելի է Փայլածուին վերայ երկրի վերայ եղածէն: Գալով այս երկու աւտեղաց համաչափ ժամանակաց մէջ ընդունած ջերմութեան ամբողջ գումարներուն, հարկ է գիտնալ, որ այս կախումն ունի արեգակնային ճառագայթներուն դարձող մակերեւոյթներէն. ուստի պարզ հաշուով մի կը գտնեմք, որ Փայլածուի ընդունած ջերմութեան քանակը՝ երկրի ընդունածին 95 հարիւրորդն է:

և որով թեանց տարբերութիւնը վեց միլիոն է, այնու ամենայնիւ իւր հեռակէտին վերայ եղած ատեն ընդունած լուսաւոր եւ ջերմական ճառագայթներուն խտութիւնը չորս ու կէս անգամ աւելի է երկրի ընդունածէն. իսկ մերձակէտին վերայ եղած ատեն՝ տասն անգամ աւելի:

Փայլածուի ինչպէս բարեխառնութիւնը, նոյնպէս և եղանակները մեծ աննմանութիւններ ունին մեր եղանակաց. բայց սրբագոյ մի կրնայ չափաւորել այս ամենը և այս պարագայն է կազային, կամ շոգեղէն, և կամ մէկ բառով լսեմք, մթնոլորտի մի էութիւնը, կամ չէութիւնը, ուստի տեսնեմք թէ ի՞նչ է աստղագիտաց կարծիքը այս մասին:

Արեգական վերայէն Փայլածուի ըրած բազմութիւ անցից ժամանակ, այն սեաւ բիծը, զոր մուրակը կը ձգէ արեգական սկաւառակին վերայ, միգամոծային մանեակով մի ջրջապտատել կ'երեւի: Այս մանեակը գիտողներէն ոմանք գտան զայն աւելի փայլուն քան արեգական մերձակայ մասերը. իսկ ոմանք՝ ընդհակառակն նուազ լուսաւոր: Առաջիններէն են Սգրոթէր եւ Հարտինկ, որք տեսան 1799 ին. Մօլ ուսուցիչը կ'ըսէ, որ այդ մանեակը 1832 ին ունէր մթին գոյն մի, որ աւելի մանիւշակագոյնի կը զարնէր, ասոր հակառակ Պ. Հրկինա 1868 ի անցից ատեն արեգակնային սկաւառակի պայծառութենէն աւելի բարձր պայծառութեամբ մի գտաւ: Այս՝ տեսակ մի պսակ, կամ բակ էր, որոյ փայլունութիւնը թեթեւ կերպով աւելի խիտ էր. իւր լայնութիւնն էր մուրակի երեւութական տրամագծի մէկ երրորդը, երբէք անոր վերայ աստիճանական նուազութիւն չէր տեսնուէր ներքին եզրէն մինչեւ արտաքին սահմանը: Եթէ ճշմարիտ է, որ Փայլածուն ջրջապտատում է թա-

փանցիկ եւ ընկրեկիչ մթնոլորտէ մի, սէպք էր արեգակնային ճառագայթներն ցրուէր, և հետեւաբար տկարացրնէր անոնց պայծառութիւնը և ոչ թէ առաւելոյր: Աւրեմն երեւցածը սոսկ տեսաբանական երեւոյթ մի է: Բայց ուրիշ գիտողներ կը ջանան հաստատել Փայլածուն շուրջը մթնոլորտի մի էութիւնը: Սգրոթէրի գիտած Փայլածունի մահիկին ուրուագրերը կը ցուցնեն, որ նոցա վերայ լուսոյ և մթնութեան բաժանման գիծը լաւ կը տրուած չէ այլ, մանուածապատ. և այս արդիւնք է այն ծծման, որով մթնոլորտական խաւերը կը ծծեն արեգակնային լոյսը: «Ըստ այսմ, Պէր և Մատլէր, կ'ըսեն որ, կարելի է հաստատել, թէ Փայլածուն ունի բաւական զգալի մթնոլորտ մի . . . »:

Եթէ այսպէս է, կարելի է գաղափար մի ունենալ այն եղանակաւորութեանց վերայ, որով սակաւ ինչ խիտ մթնոլորտ մի լուսոյ եւ ջերմութեան խտութեան առիթ կրնայ լինել բաղդատելով մեր երկրին վերայ պարզ օրերը, որ ատեն արեգական ճառագայթները ուղղակի կը հասնին երկրին, ամպամած օրերուն հետ, երբ ամպերը ամբողջ կը ծածկեն արեգակը մեր տեսութենէն: Մթնոլորտական խաւի խտութիւնը, իւր մէջ եղած ջրոյ չոգիի առաւել կամ՝ նուազ քանակը եւ սորա առաւել կամ՝ նուազ խտութիւնը կրնան առանձինն փոփոխել արեգակնային ջերմութեան ճառագայթման արդիւնքները. ինչպէս եթէ հովտի մը բարեխառնութիւնը՝ ընթաց բարձր կատարներու բարեխառնութեան հետ բաղդատեմք, պիտի կարծեմք, որ ամառէն՝ ձմեռան կ'անցնիմք, թէ և արեգակը կը փայլի ընթաց վերայ ինչպէս որ հովտաց խորերուն մէջ, Սրբա սրտճառն է հովիտներու

մէջ միջնորդութի խտուծիւնը եւ ընդհանրապէս լերանց վերայ՝ նուազութիւնը կամ անսարուծիւնը :

Վերջապէս Փայլածուի միջնորդութիւն տարրաբանական կազմութիւնը, նորա մէջ եղած կազերու բնութիւնը եւս նոր հանգամանքներ են, որք կարող են ներգործել մոլորակի կլիմային վերայ. բայց որովհետեւ ասոնց մասին ցարգ լուսապատկերական վերլուծութիւնը ոչ մի ծանօթութիւն տուած չէ, ուստի անցնիմք աստղագիտական այն երեւոյթներուն, որոց ազդեցութիւնը անհերքելի է :

Այս երեւոյթներուն առաջինը կարելի է համարել Փայլածուի աւուր տեւողութիւնը, որ 24 ժամ եւ հինգ վայրկեան է. վասն զի սոյնչափ ժամանակէն կը դառնայ մոլորակը իւր վերայ արեւմուտքէն դէպ յարեւելս. թէ ի՞նչ պէս գտնուած է այս շարժումը եւ ի՞նչ պէս չափած են սորա տեւողութիւնը: Սգրծթէր մեծ ուշագրութեամբ քննելով Փայլածուի մահկաձեւ լուսներեւոյթները՝ հաստատած է աղեղնաձեւ հատուածներու գոյութիւնը, որոնք այս լուսներեւոյթներուն վերայ լուսոյ եւ մթութեան բաժանման գիծը ատամնաձեւ կը ցուցնեն: Շատ անգամ եւս տեսնուած է մահկկին հիւսիսային եղջիւրին վերայ զատուած հատուած մի (truncature): Այս երեւոյթները միշտ տեսանելի չեն, կաներեւութանան եւ վերստին կ'երեւին, յորմէ հետեւցուցին մոլորակին հորվումը. աներեւութանալու եւ վերերեւելու ջիւաններով՝ որոշեցին հորվման տեւողութիւնը:

Գալով առանցքի ուղղութեան, որոյ վերայ Փայլածուն իւր հորվումը կ'ընէ, շատ յայտնի չէ: Մոլորակի արեգակնային մերձաւորութիւնը եւ իւր վաւիւրուն լոյսը խիստ կը դժուարացը

նեն իւր մակերեւութին վերայ եղած պատահարոց քննութիւնը, այսու աւանդային Սգրծթէր յաջողած է տեսնել մոլորակի սիււտուակը ախոսող մթին երիզներ, որոնք հաւանականաբար սիւտի լըսն ամպերու գօտիններ յառաջ եկած երկրային տարեւոր հողմոց նման կանոնաւոր հոսանքներէ. եւ որովհետեւ այս ամպային գօտինները գրծթէ մոլորակի հասարակածին զուգահեռական են, կը հետեւցնեն ասկից, որ առանցքի հակումը ոլորտի մակարթակին վերայ 20 աստիճանէն նուազ չը կրնար ըլլալ:

Որովհետեւ Փայլածուի աստղային աւուր տեւողութիւնը 24 ժամ եւ 5 վայրկեան է, (9 վայրկեան տւելի երկրի աստղային օրէն), հետեւաբար իւր տարւոյն մէջ $87\frac{2}{3}$ անգամ կը հորվի, կամ $87\frac{2}{3}$ աստղային օր կայ. իսկ արեգակնային օրերը մէկ պակաս ըլլալով աստղային օրերէն, կը նշանակէ, որ Փայլածուի տարին $86\frac{2}{3}$ արեգակնային օր կը պարունակէ. յորմէ պարզ հաշուով մի կը գտնուի արեգակնային աւուր տեւողութիւնը, որ է 24 ժամ եւ 21 վայրկեան: Մոլորակի հասարակածին վերայ ամբողջ տարւոյն մէջ, միւս բոլոր լայնութեց վերայ գիշերահաւասարից ատեն գիշեր եւ ցերեկ տասնական վայրկեան աւելի երկայն են մեր գիշերներէն եւ ցերեկներէն նման պարագայից մէջ. բայց տարւոյն միւս ատենները տունջեան եւ գիշերոյ տեւողութիւնը, նոյնպէս եղանակաց եւ կլիմայից փոփոխութիւնները հոն աւելի զգալի են քան երկրին վերայ, եւ այս յառաջ կը դայ ոլորտին վերայ հասարակածի մեծ հակումէն: Ամարան արեւակայից ժամանակ արեգակը կէս աւուր ատեն կ'անցնի այն գաւառներուն վերայէն, որք հիւսիսային բեւեռէն հաշուելով՝ 20 աստիճանին տակ են եւ բեւեռական երկայն

գիշերները կը տիրեն հարաւային կիսա-
գունտին վերայ մինչև լայնութե 20 աս-
տիճանը. ասոր հակառակը կ'ըլլայ միւս
արեւակայից ժամանակ։ Այսպէս Փայ-
լածուի վերայ երկու բեւեռներէն
խիստ հեռւոր գօտիները՝ երբեմն ի-
րենց ամառան ատեն տունջեան լոյսը
անփոփոխ կ'ընդունին, երբեմն ալ՝ ձը-
մեռան ատեն խորին մթութեան մէջ
կ'ընկղմին։ Այս տեղ սառուցեալ եւ
այրեցեալ գօտիները խառնուած են.
երբէք բարեխառն կլիմա չը կայ։

Սբրթեբի գիտած մահկաճեւ
հատուածները կը ցուցնեն, որ Փայ-
լածուի մակերեւոյթը հարթ հաւա-
սար չէ, այլ երկրի մակերեւոյթին նը-
ման խորտուբուրդ է։ Լուսոյ ու մը-
թութեան բաժանման ատամնաճեւ
գիծն եւս ապացոյց մի է Փայլածուի
մակերեւութին վերայ բարձր լեռնե-
րու և խոր հովիտներու գոյութեանը։
Այս լեռանց միոյն բարձրութիւնը չա-
փած են անգամ, և եթէ չափազան-
ցութեամբ առնուած չէ, այս բարձ-
րութիւնը մոլորակի տրամագծին գը-
րեթէ 253ր մասն է, որ ըսել է, տա-
սըն և ինը քիլոմէթր, երկրի ամենա-
բարձր լեռանց կրկին բարձրութեամբ։
Լեռներէն զատ եղած դիտողութիւնք
Փայլածուի մակերեւութին վերայ հը-
րաբուխներուն գոյութիւնը եւս կը
հաստատեն։ Սբրթեբի 1799 ամի Մա-
յիս 7 ի անցից ժամանակ լուսաւոր
կէտ մի տեսաւ մոլորակի սեաւ սկա-
ւառակին վերայ. նոյնը տեսաւ Հըրկինս
1868 ամի Նոյեմբեր 5 ի անցից ատեն։
Այս կրկին դիտողութիւններէն հետե-
ւոյցին, որ երեւցած լուսաւոր կէտը
հրաբուխ մ'է։

Բառ մի ևս Փայլածուի զանգուա-
ծի և խտութեան մասին։ Հաղիւ դար
մի կայ, որ այս մասին ապողագէտք
սկսան կարծիքներ յայտնել, որովհե-

տեւ այս մոլորակը արբանեակ չունի,
ուստի իւր զանգուածը՝ նորա մօտէն
անցնող դիսաւորաց, կամ նոյն իսկ Ա-
րուսեկի, որ ամենամերձաւորն է Փայ-
լածուին, շարժմանց վերայ ըրած այ-
լայլութիւններէն հետեւցուցին։ Ըստ
ը Վերրիէի, Փայլածուի զանգուածն
արեգական զանգուածին 5:300,000 րն
է, կամ՝ գրեթէ երկրի զանգուա-
ծէն 16 անգամ նուազ։ Երկրի մի-
ջին խտութիւնը եթէ մէկ սեւեմբ,
Փայլածուինը կ'ըլլայ 1, 14։ Սոյն մոլո-
րակի երկրի հետ ունեցած նմանու-
թիւններէն կարելի է հետեւցնել, որ
նորա կեդրոնական մասանց խտութիւ-
նը աւելի բարձր է, քան վերին կար-
գերու խտութիւնը։

Ահաւասիկ ասոնք են այն բնագի-
տական ծանօթութիւններն, զոր աստ-
ղագիտութիւնը կարողացած է հաւա-
քել Փայլածուի մասին։ Այս ամենը
համեմատելով երկրին վերայ եղած
համապատասխան ծանօթութեանց,
կրնամք բաւական ճիշդ գաղափար մի
կազմել համանմանութեանց կամ հա-
կոնմանութեանց այս երկու աշխար-
հաց, որք երկնից գաւառներուն մէջ
կրտուր շատ մերձաւորութեամբ կը
թաւալին։

ԱՌ ՎԱՐԴՆ

Ողջն քեզ ողջն
Վարդ իմ՝ փափկասուն,
Ո՛վ ծին ծիրանի
Կուսին գարնային։

Քանիցս աւաղ մինչ հոյլ 'ի հոյլ
Անկեալ տերեւք հողմոյն 'ի սոյլ,
Երկիրս 'ի ծին ապրօքատակ
Խորատուղեալ սլատէր համակ։

Այս արտասուտն սկստ 'ի յերես
Ի զսէր ելի 'ի խնդիր քեզ :
Ողջն քեզ ողջն
Վարդ իմ փափկասուն : և այլն :

Այս արդ փթթին անգրէն նորոգ
Մահաթըմը իր բնութեան 'ի գոգ ,
Զերդ 'ի շիրմէն ակընկալեաց՝
Յոյս նոր փայլէ բոց սլաց առ սլաց :
Եւ 'ի թերթից քոց խնկաւետ
Սիրո չոք հանուրս կենաց աւետ :
Ողջն քեզ ողջն
Վարդ իմ փափկասուն : և այլն :

Ո՛վ կուսագեղ ճակատուց զարդ
Բոսորանիայ շքեղդ իմ վարդ :
Որ մանկութեան աւուրց 'ի յուշ
Զօրութեա զուշ մեր եւ զուրուշ ,
Ո՛ր զքո տեսնալ քեզ լուսաթոյր
Զերդնուցու զքեզ երկնից համարդ :
Ողջն քեզ ողջն
Վարդ իմ փափկասուն : և այլն :

Խնկոյդ 'ի բոյր խոնաւաթեւ
Զմայլեալք 'ի յամպս թռչեմք թեթեւ ,
Խաղալ պարել յահուր 'ի թինդ
Եթերական զգացմանց 'ի խնդ :
Մերթ վերամբարձ մինչեւ յաստեղս
Մոռանամք բնաւ զառարտորես :
Ողջն քեզ ողջն
Վարդ իմ փափկասուն : և այլն :

Սրտան 'ի դէտ քո սաղարթուն
Եկեալ ընդ այգըս վաղարթուն ,
Սիրատենչիկ քաղցրախորթակ
Գեղգեղանաց իւր 'ի նըւագ՝
Համատարածն աղբէ բնութեան
Արայ միշինս հառաւաճայն :
Ողջն քեզ ողջն
Վարդ իմ փափկասուն : և այլն :

Այլ զու առոյգ տխոյ հանգոյն
Մալ ծալ ծիւրեալ ծնգիս անդոյն :
Եւ մասնանիշ մեղ ոխերիմ
Զառ ոտս յերեսն առնես շիրիմ :
Քեզ ցայգ մի մայր՝ տիւ մի գահիճ՝
Եւ կեանքդ իսկ բնաւ՝ ծաղր եւ քրքիւ . . .
Ողջն քեզ ողջն
Վարդ իմ փափկասուն
Ո՛վ ծին ծիրանի
Կուսին գարնայնի :

Աւետիս Կարապետեան :

ՄԱՍԻՆՈՒ

ՄԱՍԻՆՈՒ ՄԱՍԻՆՈՒ

Զ. Զգացումն .

(Շարունակութիւն և վերջ : աես թիւ 4 :)

3. — ՀՈՏՈՏԵԼԻԻՔ. — Հոտոտեղեաց ըզ-
գայարանը կը ծառայէ զգայնել մեզ
արտաքին մարմնոց մասնաւոր մի յատ-
կութիւնն՝ Հոգի, զոր ուրիշ զգայարա-
նաց միջոցաւ կարելի չէ իմանալ : Հո-
տերը՝ հոտոտելի մարմիններէն ար-
ձակուած յանհունս փոքր շամանթաղ-
ներ են օդի մէջ շոգւոյ նման տարա-
ծուած : Ամեն մարմին հաւասարա-
պէս չունի այս յատկութիւնը , այլ
այնչափ աւելի զգալի կ'ըլլայ հոտը ,
որչափ առատ ըլլան մարմնէ մ' արձա-
կուած շամանթաղները , որք մթնոլոր-
տին միջոցաւ հասնելով սոյն զգայու-
թեան յատուկ եղած գործարանը ,
այն տեղ տարածուած ջրերուն հաղոր-
դութեամբ ըղեղին վրայ կը ներգոր-
ծեն , որով և կը կատարուի Հոտառու-
թիւնը : Սոյն զգայարանը ճակատի ոս-
կորէն վար Ռնգաց խողովն է , որ ար-
մատի կողմը ոսկրային և արտաքին ծա-
րը աճառուտ մասերէ կը բաղկանայ ,
ու մէջ տեղէն ուղիղ դիրքով անջա-
տուելով երկու անցքեր կը ներկայա-
ցնէ մթնոլորտը եւ նորա մէջ գըտ-
նուած հոտաւոր շամանթաղները ըն-
դունելու համար , իր ձեւը առաւել
կամ'նուազ եռանկիւնի է . ներքին մա-
կերեւոյթը կը սլատի մաղասաւոր թա-
ղանթով մը , որ բաղմաթիւ մանր ու-
ռեցքներով թաւշանման երեւոյթ մ'
ունի , և մանրագէտով նայուելու ըլ-
լայ մշտաշարժ մազմոլակներով սլա-
տուած կ'երեւի : Վերջապէս բաղմա-
թիւ ջրեր ըստ ամենայնի զգայուն կը

գործեն զայն, մանաւանդ վերի կողմերը, դէպ ուր կ'առաջնորդուի բնականաւորօրէն : Որչափ քթին ներքին մակերեւոյթը բնորոշակ և թաշուած ըլլայ, այնչափ հոտառութիւնը սուր կ'ըլլայ և փոխադարձաբար :

4. — ՏԵՍԱՆՆԵԼԻՔ. — Արտաքին առարկաներու ձեւը, գոյնը, մեծութիւնը և այլն. առանց մեր մարմնոյն հետ շօշափուելու, լուսոյ միջոցաւ տեսանելաց գործարանին մէջ տարածուած ջրերուն հասնելով, անոնց հաղորդութեամբ Ըզեզին վրայ կը տպաւորուի, որ տեսն մարդ կը զգայ. ահա այս զգայութիւնը կը կոչուի Տեսութիւն : Տեսութեան զգայարանը Աչքերն են, ճակատի վարի դին և Ռընգաց երկու կողմերը զեանդուած : Բայց տեսութեան բուն գործարանը աչաց գնտակներն են, որք կըր, առջեւի կողմը աւելի ուռած և առաւել կամ նուազ խոնաւցած, գրեթէ 25 հազարորդամէթ տրամագծով և երեք մաշկերով վրայէ վրայ պատուած են : Արտաքին մաշկը կարծր, ճերմակ դունով և նուրբ մանրամասներով է, որ երկու կողմէն անցքեր ունի, ներքին կողմէն անթմերու և ջրերու համար, իսկ առջեւի կողմէն արտաքին հաղորդակցութեան համար : Ասոր ներքեւն է երկրորդ անթմալից մաշկը, մթապոյն նիւթով մը օծուած. իսկ երրորդը ջրալից ցանցակերպ մաշկն է, որ նոյն իսկ տեսութեան ջրերուն տարածուելէն կը կազմուի : Աչաց առջեւի կողմը, ինչպէս արտաքուստ կը տեսնուի, կը գտնուի նախ՝ Թափանցիկ Եղջերեան մաշկը, որ ժամացուցի սպիւնոյ նման, գնտակի ուրիշ մասերէն աւելի դուրս ցցուած է. սորա ներքին կողմը սակաւ ինչ հեռու մաշկէ անջրպետ մի կայ, Ծիածան ըստուած, որ զանազան անձանց քով տարբեր

գոյներով կ'ըլլայ : Ծիածանի կեդրոնը ծակ մ' ունի, որ Բիբ կը կոչուի. աւտոր ետեւի դին հաստատուած է Սառնակերպը, որ Թափանցիկ ոսպնածեւ և խիստ նուրբ փամփշտի մէջ հաւաքուած խոնաւահիւթ մ' է, նոյնակերպն խաւերէ բաղկացած, որոց խոտութիւնը կ'աճի եղջերէն դէպ ՚ի կեդրոնը և իւրաքանչիւր խաւերը ճառագայթաձեւ մանրամասներով լեցուած են : Սառնակերպը՝ առջեւի և ետեւի կողմէն կորացած դիտակի ոսպնածեւերուն նմանութիւնը ունի, և քանի որ հասակը յառաջանայ ՚ի ծերութիւն, սորա մակերեւոյթները կը տափակնան եւ տեսութեան դորութիւնը կը նուազի : Սոյն մաշկերէն ծածկոյթներուն մէջ կը գտնուին տեսութեան գործարանը կատարելագործող երեք խոնաւահիւթերը՝ Զրեղէն, Սառնակը և Ապակը : Զրեղէն խոնաւահիւթը Սառնակերպի և եղջերեան մաշկի մէջ տեղ գտնուած միջոցը կը լեցնէ Ծիածանի առջեւի եւ ետեւի կողմը : Սառնակը խոնաւահիւթը, սառնակերպի փամփշտին մէջ ամփոփուած խաւ ՚ի խաւ նիւթն է. իսկ Ապակը խոնաւահիւթը գործող և Թափանցիկ զանգուած մ' է, որ աչքին ներքին կողմը, այսինքն, Սառնակերպին եւ Ցանցակերպ մաշկին մէջ տեղ գտնուած միջոցը կը լեցնէ :

Ամեն արտաքին առարկաները լուսոյ միջոցաւ միայն մեզ տեսանելի կըրնան ըլլալ : Այս առարկայից մէն մի կէտերուն վրայ արեգակէն հասած լուսոյ շառաւիղները առարկաներու խոտութեան համեմատ կ'անդրադառնան զանազան ուղղութեամբ : Երբ սոյն լուսոյ անդրադարձեալ շառաւիղները հասնին մեր աչաց, նախ աչոյց սպիտակուցին կամ Եղջերեան մաշկի կորնթարթ մակերեւութին կը հան-

դիպին, ուր նոյնպէս ստիպւա ինչ մասն
անդրադառնալէն յետոյ, մնացեալը
Թափանցելով կը բեկբեկի (1), և Բիրէն
անցնելով, ասպնածեւ Սառնակերպին
վրայ խաչածեւ զերար կտրելով կը ցը-
րուին, բայց նուազ, վասն զի ներքին
առարկային խոնաւահիւթը կ'արգիլէ
ցրուումը. այս կերպով արտաքին ա-
ռարկայի ամեն կետերէն հասած շա-
ռաւիղները հակառակ դիրքով աչաց
գնտակներու ներքին կողմը ջղալից թա-
ղանթին վրայ կը ձեւացնեն նոյն ա-
ռարկայի պատկերը ճշդութեամբ բայց
գլխիվայր (2), վասն զի առարկայի վա-
րի կողմէն ելած շառաւիղները 'ի վեր-
իսկ վերի կողմէն ելածները 'ի վայր կը
վերջանան: Այս կազմուած պատկե-
րը ջղերուն հաղորդութեամբ Ըղեղին
վրայ տպաւորուելով, մարդ կը զգայ
նոյն առարկայի ձեւը, գոյնը, մեծու-
թիւնը և այլն. եւ այսպէս սքանչելի
կերպով կը կատարուի Տեսողութիւնը:

Աչաց վերոգրեալ ներքին մասերէն
զատ, արտաքուստ սոյն զգայարանը

(1) — Տեսաբանութեան օրինաց համեմատ Լու-
սոյ շառաւիղները համանիւթ միջոցին մէջ ուղիղ
գծով կը տիրեն կերկարին. երբ այս շառաւիղ-
ները ուղղահայեաց դիրքով ինան Թափանցիկ մար-
մնոյ մը վրայ, մի և նոյն ուղղութեամբ կ'անցնին
անոր մէջէն, շարունակելով իրենց ընթացքը. բայց
երբ խոտոր կերպով կ'յնան, նոյն մարմնոյ խոտու-
թեան համեմատ, մաս մը անդրադառնալէն յետոյ,
մնացեալը կը Թափանցէ առաւել կամ նուազ կեր-
պով իւր ուղղութիւնը փոխելով. այս երեւոյթը
կը կոչուի Բեկեկումն Լուսոյ:

(2) — Բազմաթիւ փորձերով ասացուցուած է,
որ արտաքին առարկայք գլխիվայր կը նկարուին ա-
չաց ցանցակերպ Թաղանթին վրայ: Բայց ինչպէս
անզգայի կ'ըլլան մեղ: Որովհետեւ առարկային մէն
մի կէտը առանձինն ներգործելով Թաղանթին վրայ
կը զգացունեն և կ'ըմբռնուին լուսոյ շառաւիղնե-
րուն հասած ուղղութեամբ, որով և մեք վերին
կողմը կը տեսնեմք այն կէտը, որ անկման շառա-
ւիղներով կը ներգործուի, և վարի կողմը այն մա-
սերը, որք բարձրացող շառաւիղներու միջոցաւ կը
տպաւորուին: այսպէս դարձեալ առարկայն իւր
ուղիղ զիւր մէջ կը տեսնուի:

կատարելագործող և պաշտպանող մա-
սեր եւս կը գտնուին: Աչաց գնտակ-
ները, ինչպէս ըսինք, Ակնակապիճք
ըսուած խոռոչներու մէջ հաստա-
տուած են, որք իւղային զանգուած-
ներով պատուելով կտկուղ յենարան
կրնծայեն աչաց, որպէս զի կարենան
գիւրաւ եւ անվնաս զանազան կողմ-
շարժիլ: Աչաց շարժումը ջղերուն ներ-
գործութեամբ և մկանանց գրգռմամբ
կը կատարուի: Մկանուկըրը վեց հատ
են, մի ծայրով Ակնակապիճի օսկերաց
և միւսովն աչաց գնտակներուն հետ
միացած. ասոնցմէ չորս հատը ուղղա-
ձիւք դիրքով են և աչքը վեր 'ի վայր
շարժելու, իսկ միւս երկուքը կողմնա-
կան, որք գնտակները ուղղահայեաց
դիրքի մէջ դարձնելու կը ծառայեն:
Երբ վերի կամ վարի մկանուկներէն
մին կարճ ըլլայ, աչաց գնտակը իւր
ուղղութենէն շեղած կը մնայ, և կ'ը-
սուի Շիւ:

Առջեւի կողմէն աչքերը պաշտ-
պանուած են Յծեկերով, Կոպերով, Արդե-
անոններով և Արգաստաչով:

Յծեկերը՝ ճակատի ստորուոր հորիզո-
նական դիրքով մտնել կազմուած եւ
մազերով ու շարժիչ մկաններով են:
Ասոնց պաշտանն է ճակատէն հոսող
քրտիկները արգիլել, որ աչաց վրայ չը
հոսի. նոյնպէս լուսոյ սաստիկ աղդե-
ցութիւնը չափաւորել երբ վերէն
կուգայ:

Կոպերը՝ երկուքական հատ աչաց
վերի և վարի կողմերը կը գտնուին,
որք գնտակներուն ձեւոյն յարմար կու-
րութեամբ զանոնք կը պատեն կը ծած-
կեն: Ասոնք կրճիկային բարակ թիթե-
ղով կազմուած են. եւ արտաքուստ
մարմնոյն մտնելն շարունակութեամբ
կը պատին որ այս մասերուն վրայ ա-
ւելի փափուկ, նուրբ և կէս-Թափան-
ցիկ է. իսկ ներքին մակերեւոյթը մա-

ղատաւոր թաղանթով, որ աչաց գըն-
տակները կը շօշափէ : Ասոնց ծայրերը
գտնուած ծակափքներու մէջ մասնա-
ւոր հեղանիւթ մը կը ժողվուի, որ
կոպերուն ներքին երեսը խոնաւ պա-
հելու կը ծառայէ . այս հեղանիւթը
Բիթ կը կոչուի, որ երբ չորնալու ը-
լայ, ինչպէս սովորաբար քնէն վերջը
կը պատահի, կոպերուն եզրները կը
տեսնուի գեղնկէկ գունով : Կոպերուն
պաշտօնն է, արգելել ընթերցանալու
ատեն . իսկ արթնութեան ժամանակ
շարունակ խփուելով միմիայն տեսու-
թեան հարկաւոր քանակութեամբ լո-
սը ներս թողուլ, որպէս զի լուսոյ
սաստիւթեամբ ջղային թաղանթը չը
վնասի, կը պահպանեն նաեւ աչքերը
օդոյ մէջ գտնուած մարմնոց ընդհա-
րումէն : Ասոնց եղըները կը գտնուին
կարգ մը մազեր, Արբէ-անոնք ըսուած,
որք կոպերուն գոցուած ատենը իրա-
րու մէջ անցնելով կը պահպանեն և
աչքին վայելութիւն մը կը տան : Ար-
բէ-անոնք, որ անգոյն կամ նուազ գեղ-
նագոյն հեղուկ մ'է, կը բաղկանայ
ջրէ և 4 առ 100 Նատրոնէ, կրի լու-
սածնուտէ և իւրնիքէ . կը կազմուի բա-
ւական մեծկակ գեղձի մը մէջ, որ ա-
չաց վերի կողմը կը գտնուի, ուրկէ
վեց կամ եօթը խողովակներու միջո-
ցաւ աչաց վերի կոպերուն մէջ կը հո-
սի և սպիտակուցը թանալով կը լուսոյ
ու միշտ խոնաւ, փայլուն և թափան-
ցիկ կը պահէ . մինչդեռ հակառակ
պարագայի մէջ, ինչպէս մահուան ժա-
մանակ, սպիտակուցը բոլորովին իւր
փայլը և թափանցիկութիւնը կը կորսն-
ցնէ : Կոպերուն մէջ հասնող արտա-
սուքը մասամբ մի շոգիանալով մնա-
ցածը մասնաւոր անցքերով քթին մէջ
կ'անցնի . բայց երբ աչքը գրգռի կամ
միտքը զանազան զգացումներով զբա-
ղի, արտասուքը այնչափ առատ կը

գոյանայ, որ չը կարենալով բոլորովին
քթին մէջ անցնիլ, կոպերուն եզրնե-
րէն երեսն 'ի վար կը վազէ :

5. — ԼՍԵԼԻՔ. — Լսողութիւնը կը
զգացնէ մեզ արտաքին առարկաներու
վրայ որ և է պատճառաւ գոյացած
ձայնը : Սոյն զգացութեան գործարա-
նը Ականջներն են գլխոյն երկու կող-
մերը հաստատուած : Ականջները ե-
րեք մասերէ կը բաղկանան, որք են,
Արբէ-անոնք, Միջին և Ներքին մասու-
նք :

Արտաքին մասին մէջն են Ականջաց
փաղաւարը և Խողովակը : Տաղաւարը ձա-
գարածե դրսի դին տարածուած կըռճ-
կէ և նետրդէ կազմուած է, դիւրա-
կոր, ձգտկան և զանազան ծալքերով
կամ ափսոսներով, որոյ պաշտօնն է օ-
դին միջոցաւ հասած ձայնը ամփոփել :
Խողովակը անմիջապէս տաղաւարէն
սկսելով դէպ 'ի ներս կ'երկարի մինչեւ
միջին ականջը, սորա երեսը պատող
մօրթին և մազմուկներուն վրայ կը
գոյանայ ականջաց գիղնագոյն և գառ-
նահամ աղտը, որ ձձիներուն ներս
մտնելը կ'արգիլէ . սորա պաշտօնն է
տաղաւարին մէջ ամփոփուած ձայնը
ականջաց միջին մասը առաջնորդել :

Միջին մասին մէջ են Յնդուղը,
Թմբուկը եւ ասոնց Փոքր խաւերը : Յըն-
դուղը խողովակէն անմիջապէս յետոյ
լայն և կարճ գլանաձեւ է, որոյ դէպ
'ի արտաքին կողմը եղած ծայրը թըմ-
բուկի նման, Տ կամ Գ հազարորդա-
մէթր տրամագիծ ունեցող նուրբ և
թափանցիկ մաշկով մը փակուած է .
իսկ ներքին ծայրը երկու ծակեր ունի,
որք նոյնպէս մաշկով գոցուած են,
այնպէս որ թմբկի մը ձեւ կը ներկա-
յացնեն : Թմբկին մէջ կարգաւ շա-
րուած են չորս հատ փոքրիկ և շա-
րական օսկորներ, որք իրենց ձեւոյն
նկատմամբ կը կոչուին՝ Ուռն, Սալ,
Ոսկայի-Ասպարտն : Ձայնի թրթրում-

ները առաջին թաղանթին վրայ հաս-
նելով, որ ամենափոքր շարժման զգա-
յուն է, անոր միջոցաւ այս ոսկերաց
կը հասնի, որք թմբուկին մէջ աւելի
կը շատցնեն զայն և մէկ մէկու հաղոր-
դելով, վերջին մաշկերուն կը հասցը-
նեն: Միջին մասի վարի կողմէն Փռ-
ղաձեւ անցք մը երկարած է մինչեւ
Որկորի ետեւի կողմը, Եւթաթան Փռ-
կը կողուի. ասոր միջոցաւ Ցնցուղի մէջ
գտնուած օդը կը նորոգի և միշտ ար-
տաքին օդոյ վիճակը կը ստանայ:

Ներքին Ախանջը կամ Բախլը երեք
մասերէ կը բաղկանայ, որք են, Գա-
ւիլ, Խղունջն և Կիսաբողբախի-
անցէր: Գաւիլը եռանկիւնաձեւ խողով մ'է
Ցնցուղին հետ հաղորդակցուած: Ա-
սոր վերի եւ վարի կողմերէն կ'ելան
Բողբախաձեւ անցքերը, խողովակա-
նման և պարարաձեւ, որք երեք հատ
են, մին հորիզոնական և երկուքը ուղ-
ղահայեաց: Խղունջը՝ համանուն կեն-
դանոց պատենին նման ոլորուած մա-
սըն է, որոյ խողովը ներքին անջրպե-
տով երկու մաս բաժնուած է, սա ևս
Գաւիլի հետ հաղորդակցութիւն ու-
նի. և օդով լեցուած է, մինչդեռ ներ-
քին ականջի ուրիշ մասերը ջրային հե-
ղանիւթով լի են: Ըզեղէն ելած լո-
ղութեան ջրը մինչեւ այս մասը հաս-
նելով կը ցրուի և կը տարածուի Գաւ-
իլին, անցքերուն և Խղունջին մէջ, ո-
րուն միջոցաւ ձայնը ըզեղին հաղոր-
դուելով կը զգացուի:


Ձայնը հնչական մարմնոց մասնկաց,
որ և է պատճառաւ, թրթրումէն յա-
ռաջ կուգայ: Ձայնը տարածող միջոցը
ամենուրեք տարածուած մթնոլորան
է, որոյ շամանթաղները առաջին ան-
գամ ընդունած թրթրումն իրարու
հաղորդելով ալեաց ձեւով կը սփռեն
հետ զհետէ: Երբ այս թրթրումները
հասնին Ականջաց Տաղաւարը, խող-
վակին և Թմբուկին միջոցաւ կը հա-
ղորդուին ականջաց ներքին մասը, ուր
տարածուած ջրերուն միջոցաւ Ըզեղին
վրայ ներգործելով կը զգացնեն նոյն
թրթրումները պատճառաւ ձայնը, և
այսպէս սքանչելի կերպով կը կատա-
րուի Լսողութիւնը:

Ասոնք են մարդոյ մասնաւոր զգա-
յարանները, և բոլոր ներքին և ար-
տաքին գործարանները, որովք իմաւ
տուն ճարտարապետը Գեղաղարդած
է իւր բանաւոր հրաշակերտը, ըստ
ամենայնի իւր պիտոյքը հոգալու, վը-
տանգներէ խուսափելու և անվրդով
ապրելու համար:

Սա եւս գիտնալ հարկ է որ Ակա-
մայ շարժման, ինչպէս են, Մարտ-
ղութեան, Արեան շրջանի և կազմու-
թեան գործարանները մի օրինակ կը
գործեն մինչեւ ցմահ. իսկ կամաւոր
շարժման գործարանները պէտք ունին
երբեմնակի հանգստեան, որ կը կա-
տարուի Գոռն ըսուած վիճակին մէջ,
որ ատեն շարժել, խօսել, ուտել, տես-
նել և այլ կարողութեանց գործարան
ները կը դադարին գործելէ: Չափա-
ւոր քունը կարեւոր է այս գործարան
ներուն վերստին ղորութիւն տալու
համար. իսկ չափազանցը վնասակար
է և թուլութիւն ու գործարաններու
և ներքին մասնաւոր հեղանիւթներու
խանգարումն կը պատճառէ: Բժշկա-
կան օրինաց համեմատ մանկանց քնա-
նալու տեւողութիւնը՝ 8-9 ժամ, չա-
փահասներուն 7-8 և ծերոց 6-7 ժամ.
թէեւ մարմնոյ և կազմութեան վիճա-
կին ու առողջութեան համեմատ ա-
սոնք եւս առաւել կամ նուազ կը փո-
փոխին: Գիշերուան քունը զորացու-
ցիչ և օգտակար է, մանաւանդ կէս
գիշերէն դէպ 'իլոյս, իսկ ցորեկուա-
նը թուլութիւն և տկարութիւն կը
պատճառէ:

Այսքան նկարագրելով ուրեմն մարդոյ արտաքին մասին մարմնոյ այլ և այլ զարմանալի գործարանները, կը վերջացնեմք Մարդոյ պատմութեան սոյն մասը, մտադիր լինելով յաջորդաբար խօսիլ նաեւ իւր կենաց այլ և այլ հանգամանքներուն վրայ, նկատել նորա կեանքը աշխարհի վրայ ծննդենէ մինչեւ ցմահ:

Գ. Ս. Իսկայել:



ԲՆԱԳԻՏՈՒԹԵԱՆ

ԵՒ ՏԻԵԶԵՐԱԳՐՈՒԹԵԱՆ ՎՐԱՅ

ՊԱՐԶ ԻՅՅԱԿՑՈՒԹԻՒՆ

(Շարունակութիւն, տես թիւ 4.)

ԳԼՈՒԽ Գ.

ՏԻՒ ԵՒ ԳԻՇԵՐ

Երկրին ինքն իւր վրայ դառնալը. — Ընդդիմախոսութիւնք. — Երկրի այս շարժման տիւ, եւ գիշեր պատճառելը:

ՕՐԻՈՐԴ ԹԱԳՈՒՀԻ. — Փոքրիկ բարեկամներս, այնպիսի բան մը կուզեմ ըսել և վստահ եմ, որ չափազանց պիտի զարմացնէ զձեզ. այնինչ հոս կը խօսակցինք և կարծէք թէ հանգարտ էք, մեծ ճանապարհորդութիւն մը կը կատարենք: Կը տեսնեմ, որ կը ժրտիք և թերեւս կարծէք թէ կատակ կ'ընեմ: Շատ լաւ. բայց կը սխալիք. մենք միջոցին մէջ պաշարման ատեն Փարիզէն մեկնող օդապարիկին պէս կը քայլենք. մեր երկրագունդը կ'որ օդապարիկի մը նման երկնից մէջ յաւիտենապէս կը շրջագայի, բնակիչներն ալ իւր հետ պտըտցնելով:

ՄԱՐԻԱՄ. — Ո՛հ, Օրիորդ, եթէ երկիրը ձեր բաժին պէս շարժէր, մենք անոր վրան ըլլալով պիտի զգայինք անշուշտ և տեսնէինք իսկ. բայց ո՛չ կը զգանք և ո՛չ կը տեսնենք:

ՕՐ. ԹԱԳ. — Նախ, եթէ չենք զգար երկրի մեր ոտից ներքեւ շարժիլը, այն է պատճառը, որ երկիրն օդին վրայ հողովելով՝ չը ցնցուիր, մինչդեռ կառքի մը մէջ եղած ժամանակնիս, անոր անկունները սալալատակներու զարնուելով եւ կոպիճներու ընդհարելով կը ցնցուինք: Երբ շուգեկառքով ճանապարհորդ ենք, նուազ ցնցում կը զգանք քան թէ կառքով ճանապարհորդած ժամանակ, թէեւ շուգեկառքն աւելի արագ կ'ընթանայ. որովհետեւ շուգեկառաց խումբն երկաթուղւոյ վրայէն կը սահի, ուստի և այս պատճառաւ այնչափ չենք ցնցուիր, որչափ կառքի մէջ: Օգտուել նուորդները կ'ըսեն թէ ամենեւին օդապարիկին շարժումը չեն զգար. աչքերնին դոցնելով կարծեն թէ անշարժ են. բայց երկիրը գիտելով՝ կը տեսնեն, որ բարձրացած ժամանակնին անկէ կը հեռանան եւ իջած ժամանակնին անոր կը մօտենան: Ահա այսպէս ալ երկրի շարժումը չենք ըզգար, բայց կը տեսնենք:

ՄԱՐ. — Ի՛նչ, կը տեսնենք:

ՕՐ. ԹԱԳ. — Ինչպէս որ օդապարիկին շարժումն երկիրը գիտելով կը տեսնուի, նոյնպէս ալ երկրի շարժումը քանի մ'աստղեր գիտելով կը տեսնուի, յորոց կը հեռանանք՝ յետոյ մօտենալու համար:

ՅԱԿՈԲ. — Եւ ո՞ւր կ'ընթանք:

ՕՐ. ԹԱԳ. — Նախ կը դառնանք. վասն զի մեր բնակած երկիրն արեգակին առջեւ շոնչանի մը (չարիֆէլէք) նման կը դառնայ:

ՄԱՐ. — Երկիրը կը դառնայ:

ՕՐ. ԹԱԳ. — Այո՛, կը դառնայ, և

ահա՛ այս է տունջևան եւ գիշերոյ պատճառը :

ՄԱՐ. — Չեմ հասկնար :

ՕՐ. ԹԱԳ. — Ձայն պիտի բացատրեմ ձեզ, ինձ նարինջ մը եւ վառած մամ մը տուէք : — Լաւ, շնորհակալ եմ : Դիցուք թէ նարինջ երկիրն ըլլայ եւ վառած մամն ալ արեգակը : Նարինջը գիւրաւ դարձնելու համար անոր մէջ տեղէն գուլցոյ հիւսելու տեսք մը կ'անցնեմ : Դիտեցէք այժմ, նարինջը մամին գիմացը կը բռնեմ, ինչ կը տեսնէք : Նարինջին կէոր լուսաւորուած է եւ կէսը ստուերին մէջն է : Այսպէս ալ երկրիս կէսը լուսաւորուած է արեգակէն եւ քիւ կամ յընէ՛ է, իսկ կէսն ըստուերին մէջն է եւ գիշեր է : Բայց քանի որ նարինջը դարցնեմ, կը տեսնէք, որ լուսաւորուած մասը հետզհետէ ըստուերին մէջ կը մտնէ, իսկ ստուերին մէջ եղած մասը կամաց կամաց կը լուսաւորուի : Ահա՛ այսպէս երկիրն արեգակին առջեւ կը դառնայ եւ մենք երկրին վրայ ըլլալով՝ երբ արեգակին գիմացն ըլլանք, տիւ կռնենանք, իսկ երբ միւս կողմն ըլլանք, գիշեր :

ՄԱՐ. — Շատ արագ կը դառնանք :

ՕՐ. ԹԱԳ. — Մէկ անգամ դառնալու համար 24 ժամ կ'անցնենք, այսինքն մէկ տիւ եւ մէկ գիշեր : Առաւօտուն կ'ըսինք արեգակը տեսնել, յետոյ անոր առջեւէն կ'անցնինք եւ երեկոյն, երբ գիշեր կ'ըլլայ, ստուերին մէջ կը մտնենք՝ միւս կողմը դառնալով, եւ այսպէս մինչեւ միւս առաւօտ ստուերին մէջ կը դառնանք եւ դարձեալ լոյս կը տեսնենք եւ վերստին կ'ըսինք նախորդ աւուր պէս արեգակին առջեւէն անցնիլ, եւ այսպէս յաջորդաբար երկրի այս շարժումն, որով անուի մը նման ինքն իւր վրայ կը դառնայ, հոլովան շարժումն կը կոչուի :

ՄԱՐ. — Ուրեմն յորեկին արեգակն

է, որ դմեղ կը լուսաւորէ, ինչպէս որ այս մամը նարինջն կէսը կը լուսաւորէ :

ՕՐ. ԹԱԳ. — Այո՛ :

ՄԱՐ. — Սակայն շատ օրեր արեգակը չը տեսնուիր :

ՕՐ. ԹԱԳ. — Երբ մեր եւ արեգակին մէջ տեղ ամպեր գտնուին, արեգակն աղօտ կ'երեւի, որովհետեւ ամպերն արեգակին ճառագայթներուն մէկ մասը կը խաբանեն : Արեգակը, թէ եւ նոյն ամպերէն քողարկեալ չը տեսնուիր, բայց դարձեալ բաւականաչափ կը լուսաւորէ զմեզ, ինչպէս որ շղարչէ (թիւլ պէնտ) վարագոյրի մ' ետին դուռած կանթեղ մը սենեակ մը կը լուսաւորէ առանց բոցը տեսնուելու :

ԳԼՈՒԽ Դ.

ՏԻՒ ԵՒ ԳԻՇԵՐ

(Շարուսակոմիւն)

Նոր ընդդիմախօսութիւն երկրի շարժման, Գալիլէոս. — Արեգակն եւ աստղաց երկրի բոլորտիքը դառնալու համար պէտք եղած արագութիւնը. — Վազոյ ծառեր. — Գլխաւոր կետեր :

ՅԱՎՈՐ. — Օրիորդ, տիւն ու գիշերը բացատրելէք ՚ի վեր բան մը կը մտածեմ :

ՕՐ. ԹԱԳ. — Ի՞նչ կը մտածէք :

ՅԱՎ. — Դուք ըսէք թէ մեր տունջևան եւ գիշերոյ պատճառն երկրին արեգակին առջեւ դառնալն է :

ՈՐ. ԹԱԳ. — Կործեմ թէ զայն լաւ բացատրեցի ձեզ : Մի՞թէ չէք հասկըցած :

ՅԱՎ. — Ձեր բոլոր ըսածները խիստ լաւ հասկեցած եմ, բայց անկէ ՚ի վեր շատ դիտեցի արեգակը եւ տեսայ, որ կը քալէ :

ՕՐ. ԹԱԳ. — Տեսաք, որ արեգակը կը քալէ :

ՅԱԿ. — Այո՛, օրիորդ : Առաւօտուն արեգակն անկողմն , հորիզոնին մօտ տեսայ , միջօրէին գլխուս վերեւն էր , և վերջապէս հորիզոնին միւս կողմն յառաջանալով՝ ձախ կողմն աներեւոյթ եղաւ և գոգցես երկրին տակը կ'իջնար :

ՕՐ. ԹԱԳ. — Այդ է՞ք բոլոր տեսածք :

ՅԱԿ. — Այո՛, օրիորդ , բայց տեսածիս վրայ վստահ եմ :

ՕՐ. ԹԱԳ. — Շատ լաւ , ի՞նչ կարծիք ունիք :

ՅԱԿ. — Ես կարծեմ թէ արեգակն երկրիս բոլորաթիւը կը դառնայ , և այսու դարձեալ կրնանք յորեկ ունենալ , երբ արեգակը մեր առջեւէն անցնի և գիշեր , երբ արեգակն երկրիս միւս կողմն անցնի : Այս կերպով մենք չենք պարտաւորիր ինքնին դառնալ տիւ և գիշեր ունենալու համար :

ՕՐ. ԹԱԳ. — Շատ լաւ ըրիք , որ արեգակը դիտեցիք , բազմաթիւ գիտնականներ ճիշդ ձեր ըսածին պէս խորհած էին երբեմն : Ընդ երկար այնպէս կարծաւած էր թէ արեգակն երկրիս շուրջը կը դառնայ : Բոլոր գիտնականներն այնչափ համոզուած էին այս բանիս , որ երբ ուրիշ աւելի մեծ գիտնական մը , այն է Քալիլէոս , ուղեց ապացուցանել , որ արեգակն երկրիս բոլորովը չը դառնար , այլ երկիրն ինքն իւր վրայ կը դառնայ , յայտնեցին թէ այս գիտողութիւններն այլանդակ էին , և փոխանակ անոր նման ճշմարտութիւնն ՚իլոյս ամէլ աշխատելու , զայն հաղածեցին : Բանտարկեցին զայն և բռնադատեցին , որ ըսէ թէ սխալած եմ , բայց հաջիւ թէ այս խօսքը բերնէն կորոյծ էին , երբ զարապին գոչեց ոտքը գետին զարնելով՝ « Եւ սակայն կը դառնայ » :

Արդարեւ արեգակն այնչափ հեռու է երկրէս , որ այս հեռաւորու-

թեամբ երկրիս շուրջը դառնալու համար պիտի սլաքաւորուէր 900 միլիօն հազարամէդրէն աւելի երկայն շրջանակ մը գծել , որ ղրբ կը կոչուի . եւ որովհետեւ արեգակն իւրաքանչիւր օր՝ միջօրէին մեր գլխուն վրայ կուգայ , ուրեմն 24 ժամուան մէջ 900 միլիօն հազարամէդր պիտի քայլէր , որով իւր ժամական արագութիւնը գրեթէ 38 միլիօն հազարամէդր պիտի ըլլար :

Միայն արեգակը չէ , որ երկրիս շուրջը դառնալ կը թուի , այլ եւ անհուն ոլբանութեամբ աստղեր կը թռչին թէ 24 ժամուան մէջ երկրիս շուրջը կը դառնան : Այս աստղերէն ոմանք արեգակէն շատ աւելի հեռու են մեզմէ . ուրեմն պէտք է որ այս աստղերն արեգակէն աւելի արագ ընթանան իրենց շրջանը կատարելու համար . և ոմանք , որոնք աւելի մօտ են մեզ , պէտք է , որ նուազ արագ ընթանան մի և նոյն ժամանակի մէջ իրենց շրջանը կատարելու համար : Այս սոսկալի և տարբեր արագութիւնները բնաւ ճշմարտանման չեն և աւելի հաւանական է , որ մենք երկրին հետ 24 ժամուան մէջ դառնանք , որ ատեն կը տեսնենք այն ամեն աստղերը , որոնք գոգցես կարգաւ մեր առջեւէն կ'անցնին :

ՅԱԿ. — Այլ սակայն ինչո՞ւ արեգակը հորիզոնին մէկ եզրէն միւսը կ'երթայ :

ՕՐ. ԹԱԳ. — Շոգեկառքի մէջ եղած ժամանակ նկատած չե՞ս երբէք , որ ճանապարհին եզրի ծառերը կարծես առջեւէդ կը վազեն . սակայն այս ծառերն իրենց տեղն անշարժ կը մընան . վաղը քեզ փոխադրող կառախումբն է : Նոյնպէս ալ երբ երկիրն արեգակին առջեւէն անցնի , կարծես թէ արեգակը հորիզոնին մէկ կողմէն դէպ ՚ի միւսը կը յառաջանայ :

Հորիզոնին այն կողմը, ուրիշ գոգցես առաւօտուն արեգակը գալով վեր կ'ելնէ, Արեւելք կը կոչուի. հորիզոնին այն կողմը, ուր կարծես արեգակը կը խռնարհի մայրը մտնելու համար, Արեւմուտք կը կոչուի: Երբ արեւելքը մեր աջակողմն ըլլայ և արեւմուտքը՝ ձախակողմը, ճիշդ մեր դիմացն եղող հորիզոնին կէտը Հիւսիս կը կոչուի. եւ ճիշդ մեր ետեւն եղող հորիզոնին կէտը՝ Հարաւ:

Հորիզոնին այս չորս կէտերը գլխաւոր կէտք կը կոչուին:

(Շարունակելի է:)

ՈՒՂԵՒՈՐՈՒԹԻՒՆ

Ի Սուրբ Էջմիածին: 1876 Յուլի 20.

(Շարունակութիւն, տես թիւ 4:)

Փոթի քաղաքը շինուած է Ռիոն գետի եզերքը, և տակաւ կը յառաջանայ ընդարձակ և բարեկարգ ճամբաներով և հասարակայ պարտիզով, շինուածներով, կան նաև հիւրանոցներ և իջեւանատեղիք (Օթել), քաղաքին ամբողջութիւնը միահաղոյն չի տեսնուիր պարտիզաց և ծառատնկոց խտութենէ, ոչ միայն քաղաքին տեղը այլ և ամբողջ շրջապատը ճախնային է, ուստի ամառնային եղանակին օգը կ'սպաննի, տէնդը և հիւանդութիւնը կ'աւելնան, բնակիչք Ռուսք և Վրացիք, իսկ Հայք կը համարուին 80 անձանց չափ, ունին և փոքրիկ Եկեղեցի մի և հովիւ Տէր Կոստանդին քահանայ ՚ի Կորի աւանէ Վրաստանի, ընդ հագեւոր իշխանութեամբ վիճակաւորին Թիֆլիզու. աստ մի գիշեր մնալով հետեւեալ օրը գնացինք երկաթուղոյ

կայանը, Ռիոն գետին վերայ շինուած բաւական ձիգ երկաթեայ կամուրջն անցնելով՝ առաջնորդութեամբ յիշեալ քահանային, որ մեր կարեւոր պիտոյից բաւական ձեռնառութիւններ ըրաւ, կայանը բաւականի չափ շքեղ շինուած, պաշտօնատարաց ճանապարհորդաց և այլ կարեւոր պիտու յից համար տեղեր պատրաստուած են, և տակաւին շինուելու վրայ են: Եւ առաւօտեան ժամ 2ին երկաթուղոյ կառաց շարքը մեկնեցաւ, ճանապարհին երկու կողմը անտառախիտ էր և միանգամայն ճահիճ, մինչ զի անձրեւային եղանակին որոց մէջ նաւու կաւ չըջել, եթէ կարելի է, միայն տեղոյն բնակչաց է գիտելի, անտառին քանի մի տեղերը հրդեհած են, որոց կիսայրեաց կոճղներն ոմանք կանգուն և ոմանք կիսակործան խանձողած կ'երեւին: Աստ հանքային ածխոյ գործածութիւնը տակաւին սովորութիւն եղած չէ. այլ փոխանակ նորա փայտ, զոր անտառը առատութեամբ կ'ընծեն է, մեքենայով մանր շերտեր կըտրատած, ճանապարհին և ուր որ հարկն է մեծամեծ կոյտերով դիզած և պատրաստած են մինչ ՚ի Տփլիս: Երկրին բերքն է առատ մրդեղէն, որ վերայ գրեալ անտառներուն մէջ և մասնաւոր պարտեղներու մէջ կ'աճին, տանձ, խնձոր, դեղձ, խիստ խոշոր և դիւրագին, խաղողի որթը տեղ տեղ ծառերու վերայ պլլուած են, եգիպտացորեան, կորեկ մանր, և մի տեսակ ընդեղէն կորիկէն փոքր խնձորներ, որ տեղացիք իրենց լեզուաւ (լոճ) կը կոչեն, բնակիչք Մէնկրել, և դաւառը իրենց բնական հայրենիք, կեանք դիւղական, տարազ դգեստուց խառն ՚ի Վրաց և ՚ի Պարսկ, տունք եկեղեցիք վնտրայք՝ լեռներու վերայ անտառներու մէջ ցրուած, առանձին գիւղ

կամ քաղաք խիստ սակաւ, կրօնք յու-
նադաւան, լեզու Վրացերենէ փոքր
ինչ տարբեր, կը սնուցանեն կենդան-
եաց տեսակները որք են արջառ ոչ
խար, գոմէշ, խոզ, բայց առաւել բազ-
մացած են հաւ և ջրային կենդանիներ
սագ, բագ, իրենց տեսակներով, ճա-
հիճներու և բազմաթիւ առուակնե-
րու պատճառաւ, Մինկրէններուն մէջ
կը գտնուին նաեւ սակաւաթիւ Աս-
խաղք: Այս սահմանը երկաթուղիով
գրեթէ 3 ժամ տեւեց, եւ այնուհե-
տեւ մտանք Իմէրէթի սահմանը:

Այս երկիրը լեռնոտ և անառուտ,
ճահիճներէն զերծ, եւ նոցա փոխա-
րէն գեղեցիկ գետակներ, երկիրը մը-
շակուած և մարգագետինը առատ 'ի
գիր անասնաբուծութեան, տեսանք
նաեւ բամբակի մշակութիւն և շերա-
մատածութիւն, բայց խիստ տկար և
վտիտ, մրգեղէնը առատ, և 'ի տեղիս
տեղիս ընտիր խաղող, լեռներէն իջած
ջրերը առատ և աղբերակունք: քաղա-
քահամ, բնակիչք իրենց գաւառին
անուշով կը կռնեն Իմէրէթ, լեզու
Վրացերէն, կրօնք յունադաւան, բը-
նակութիւնք կը բաղկանան բազմա-
թիւ գիւղերէ, գաւառին լեռնային և
դաշտային այլ և այլ տեղերը, ունին
առանձին վանորոյս և կուսաստանս,
տարազ զգեստուց ըստ Մինկրէլաց,
կը պարտապին երկրագործութեան եւ
փայտահատութեան, երկաթուղւոյ
կաթաղային առատ նիւթ պատրաստե-
լով, կան նաեւ հարուստ և հողատէր
մարդիկ, յորոց ոմանք Տէրութեան
պաշտօններուն մէջ կը ծառայեն, և ու-
մանք վաճառականք:

Իմէրէթի սահմանին մէջ Քաղիա-
ցի մի բաւական երկիր ձեռք բերե-
լով Եւրոպայէն որթի տունկեր բե-
րած և այգի տնկած է, և միշտ կ'աշ-
խատի Քաղիոյ գինի հաղցնել: Տե-

սանք Ճանապարհին սոցա կուսանաց
մի վանք, որ սեպացեալ ժայռի մի գը-
լուխ շինուած է բարձր եւ սրածայր
կաթողիկէիւ, Հայաստանի Եկեղեցեաց
գմբէթներու ձեւով, որոյ վերելից
ճանապարհը խիստ դժուարին, կան
նաեւ այսպիսի մասնաւոր շէնքեր թէ'
տուն և թէ եկեղեցի, որ առանձին
տեղեր շինուած են: Իմէրէթի սահ-
մանը չաւարտած հեռուէն սկսաւ ե-
րեւել նորա Քիւթայիս մայրաքաղաքը,
որ լեռան կողէն դէպ 'ի զաւ 'ի վայր
շինուած է, և Ռիոն գետը նորա ստու-
րտէն կ'անցնի, քաղաքին կեդրոնը
կ'երեւի Արքեպիսկոպոսարանը հոյա-
կապ տեսքով: Բաց 'ի Վրաց ազգէն,
կան նաեւ 300 Հայ ընտանիք և մի Ե-
կեղեցի քահանայիւք և ծխական դըպ-
րոցով ընդ հոգեւոր իշխանութեամբ
վիճակաւորին Տփլիսու, ընդ որս եւ
սակաւաթիւ պապականք: Այս նա-
հանգը տեսանք բոլոր ծառասնկոց մի
կողմը խորշած, որ ամառուան եղա-
նակին արեւելեան կողմէն շնչած խիստ
ջերմ և տապախառն հողմն պատճա-
ռած՝ և տնկոց տերեւները խորշակա-
հար յամաքացուցած է: Այս տեսա-
րանները կարելի եղածին չափ զննելով՝
հասանք Քիւթայիսի կայանը, Ռիոն
գետին վերայ ձգուած երկաթի կա-
մուրջէն անցնելով, (թէպէտ շատ տե-
ղեր այսպիսի կամուրջներէն անցանք,
որոնք երբեմն մեծ և երբեմն փոքր,
և տակաւին շատ ալ պիտի անցնինք
մինչ 'ի Տփլիս, որոց մի առ մի թը-
ւումն աւելորդ է):

Այս կայանէն մինչ 'ի Քիւթայիս
երկաթուղւոյ ճիւղ մի պիտի բաժնուի,
և այժմ գործաւորները ամենայն ա-
րագութեամբ ճանապարհը կը պատ-
րաստեն, առ այժմ Քիւթայիսի ճա-
նապարհորդք կառուղիով միայն կը
բաւականանան: Այս կայանէն մեկ

նելով հասանք յաջորդ կայանը , ուստի կը սկսի Վրաստանի սահմանը : Աստիճադեկառքի շարքէն վեց վիշն յետաձգեցին , և մնացեալներուն յաւրիցեն մի աւելի զօրաւոր և զոյգ ծըննկողով մեքենայ մի (լոկոմոթիվ), եւ երբեմն կրկին . Սիւրամայ լեռները եւ լալու , որոնք բարձր և անտառով ծածկուած . ճանապարհը փոքր ինչ զառի վեր եւ դժուարին լինելով՝ խիստ հանգարտութեամբ սկսաւ շարունակել իւր ճամբան , այս զառի վերը լրանալէն զինի , կը սկսի այնուհետեւ գէտի ի զառ վար իջնալ , նոյնպէս հանդարտ և կարի զգուշութեամբ . մինչեւ ցատտ կառքը երեք տեղ լեռներուն երբեքէն անցաւ խիստ փոքր երկաթուղեամբ , բայց խաւար չըլտիւնի գործելով , որոց երկուքը ժայռը ծակելէն զինի կամարակապ պատած են , իսկ մին ժայռը խիստ կարծր լինելուն իւր բնական գիրքով առանց շինուածի թողուցած են : Վրաստանի սահմանը կը տեսնուին ընդարձակ դաշտեր գիւղեր աւաններ , եւ քաղաքներ , դաշտերը մշակուած , անտառ չերեւիր , բացի հարաւային լեռներէն , կ'արածին բազմաթիւ նախիրք անդէոց և հոտ ոչխարաց և այլ կենդանեաց , կ'երեւի գիւղ մի աստ , որոյ բնակիչք ամբողջ Հրէից ազգէն . թէ Սիւրամայ լեռները և թէ ընդարձակ դաշտերը անցնելէն զինի , երեկոյն ժամ 12ին հասանք ի Կորի . Աւանը բաւական ընդարձակ է և ստորոտէն գետակ մի կ'անցնի , հին աւերակ բերդը աւանին կեդրոնատեղին կ'ամբառնայ , բնակիչք Հայք , Վրացիք , կը գտնուին նաեւ Ռուս պաշտօնատարք և զօրք , հասարակ լեզու Վրացերէն , Հայք ունին մի Եկեղեցի եւ ծխական դպրոց . աստ գիշերուան մութը վերայ հասաւ և կարելի չէր առարկաները

համարձակ զննել , թէպէտ անցանք քանի մի կայաններէն և Վրացի գիւղերէն , այլ ոչ այնքան նշանաւոր . նոյնպէս Մծխիթայ աւանը ուր կը տեսնուի Վրացւոց գմբեթաւոր հին Եկեղեցին , և այս տեղ կը պահուէր նոյնեայ սուրբ Խաչը , Քրիստոսի Խաչափայտէն մի մասն ունեւելով , և այս Խաչին ուխտի կ'երթային Հայք , Վիրք Հայոցմէ չի բաժնուած , նոյնպէս եւ Վիրք ի սուրբ Էջմիածին :

Իսկ մենք Օգոստոս 27 ժամ վեց գիշերը հասանք Տփլիսի կայանը , որ քաղաքէն կէս ժամ հեռի է , ուր խուռնուած տեսանք մեծ բազմութիւն աւրանց և կանանց , կառաց և երիւարաց :

Գիտել տրժան է աստանոր թէ՛ Փոթիէն սկսեալ մինչ ի Տփլիս , ճանապարհին յարմար և պատշաճաւոր տեղեր շինուած կայանները , որոց աւանները մի առ մի յիշել աւելորդ համարեցինք , եւ ասոնցմէ դատ , երկաթուղւոյ պաշտօնէից բնակութեան , ճանապարհորդաց կարեւոր պէտքերը հոգալու և պատրաստելու օթարաններ . հեռագրատուն , պահնորդաց ննջարան և հսկելու տեղերը և ինչ որ հարկաւոր է ըստ պտտաճի շինուած , եւ տակաւին պահանները լրացնելու վրայ են , եւ նոցա բարեկարգութեան միշտ կը հսկեն . կայաններէն խիստ երեւելին Միքայելով կոչուած կայանն է յանուն Միքայելի մեծ դրքսին Կովկասեան փոխարքային , որոյ հարաւային կողմը կայ բաւական մեծութեամբ գիւղ մի , այս կայանին շէնուածքը երեւելի և նշանաւոր է աւանը և հաստատունն ի կոյածոյ քարանց իւր բոլոր պարագայիւք . և աստ է երկաթուղւոյ մեծ գործարանը նոյնպէս ամբութեամբ շինուած , ուր կը նորոգուին երկաթուղւոյ վնասեալ

այլ և այլ գործիքները, եւ պէտք եղածներն նոր կը շինուին առանց կարօտելու Եւրոպայի:

Անմուսնալի է Գանձակեցի Պ. Յովհաննէս Պաղդազարեան ազնիւ երիտասարդին մեզ մատուցած մեծ բարիքը և օգնութիւնը՝ թէ ճանապարհին և թէ Տիփլիսի կայանը, որ գիշերատեն խուռն բաղնիքէն մէջ մեր ամեն պէտքը հոգալով զմեզ Վանքը խրկեց, ուր կարի դժուար եղաւ ըզմեզ ծանօթացնել սպասաւորաց եւ հանգստարան գտնալ:

Իսկ առաւօտեան գտանք անդ Զաւրեան Սարգիս և Սագինեան Գրիգոր Եպիսկոպոսները, վերջինն, Ախլցղայ բաղաքին յաջորդ, և Տիփլիսու առժամանակեայ Առաջնորդական տեղապահ էր վիճակաւոր Առաջնորդին բացակայ լինելուն պատճառաւ, որք մարդասիրութեամբ ընկալան զմեզ: Այս Եկեղեցին կառուցեալ է յանուն սուրբ Աստուածածնի և վանք կը կոչուի, որոյ ժամանակ առ ժամանակ նորոգութեան յիշատակարանները Եկեղեցւոյ դռներուն և որմերուն վերայ կը տեսնուին: Եկեղեցին ժողովրդոց բազմութեան նկատմամբ այնքան ընդարձակ չէ, ունի երեք սեղան որոց վերայ կամբառնայ երեք սրածայր գմբէթներ, շինուած է նաեւ մեծ զանգակատուն, և գաւիթը կը տեսնուին երեւելի մարդկանց և այլոց գերեզմաններ, որոց տապանաքարերը Հայերէն և Վրացերէն գրուած են:

Աստ շինուած է Առաջնորդարանը ընդարձակ փառաւոր եւ կրկնյարկ, յառաջնորդութեան եւ Զանիւք Զաւրեան Սարգիս Ս. Արքեպիսկոպոսին, որոյ ստորին յարկի մի մասը հոգեւոր կառավարութեան ատենին (Գծնիսիւրիայ) յատկացած է, արեւելեան կողմն է Կուր գետը:

Տիփլիս կամ Թիֆլիզ մայրաքաղաք Վրաստանի, այժմ ընդ իշխանութեամբ կայսերն Ռուսաց որ և կը կոչուի Թագաւոր Վրաց, աստ կը նշատի Կովկասեան փոխարքայն կայսերեղբայր Ալեքսանդր Նիկողայեվիչի Միխայէլ մեծ դուքսն: Քաղաքը հարաւէն ՚ի հիւսիս ձգուած լայն և երկար հովտի մէջ շինուած է. ուստի կանցնի Կուր ձկնաբեր գետը, որոյ վերայ շինուած է Մալականաց աղօրիքը, ջուրը ամառը միշտ պղտոր, քաղաքին մի կողմը կը կոչուի Հալուապար, իսկ միւսը բուն քաղաքին անուամբ. հարաւային կողմը միայն Եւրոպական ձեւով մեծամեծ նոր շէնքեր կը տեսնուին, որոնք մեծ մասամբ Հայ երեւելեաց կը վերաբերին. այս կողմն է փոխարքային պալատը, զօրանոցը, Տէրութեան երկսեռ դպրոցները, հասարակաց մեծ պարտէզը իւր աւաղանով, և այլ երեւելի շինուածներն, և միւս կողմն է զինարան, մթերանոց և գործարան զինուոց: Իսկ քաղաքին մնացեալ մասը տակաւին հին դրութեամբ է, տուները կաւաշէն և աղիւսակերտ, խիտ և անշուք, փողոցները տեղ տեղ նուրբ և աղտոյի: Բնակիչք Հայք, Ռուսք և Վրացիք, Մահմետականք կամ Պարսիկք սակաւաթիւ, և ունին մի մզկիթ: Բնակիչք ընդհանրապէս կը համարուին 30.000 գերդաստանք, հասարակ լեզու Վրացերէն, Հայ ընտանիքը 10.000 էն աւելի կը հաշուեն, որոց մէջ կան հարուստ և երեւելի ընտանիքներ, ազնուականք վաճառականք, և մեծամեծ պաշտօններու հասած անձինք, իսկ մնացեալները միջակ և ստորին կարգի վաճառականք, կրպակաւորք եւ արհեստաւորք, որք կ'անուանին Էմաֆ կամ Էմաֆար: Կան երեւելի օթարաններ եւ իջեւանատեղիք, որք կոչեն Գիւլան սարայ, որոց ոմանք հնացեալ և

անշուք : Աստէ աթոռ Տիխիսի և Իմերէթի վիճակաւոր Առաջնորդին Հայոց , քաղաքին մէջ ունին Հայք 24 Եկեղեցիա , որոշեալ քահանայիւք և մէն մի ծխական դպրոցով և մի Կուսանաց վանք , բաց ՚ի դպրոցէն Տիկնոջ փոխարքային , ուր կ'ընդունուին Հայ աղջկունք առանց խտրութեան կրօնի , որ եւ ունին որոշեալ հայկաբան դասատու , ունին նաեւ Ազգային դպրոց աղջկանց : Անուանի է աստ Ներսիսեան ուսումնարանը , որոյ կառուցման պատճառ եղած է Ներսէս Ե . Աշտարակեցի բարեյիշատակ Կաթողիկոսն Հայոց , ուսումնարանի կառավարութիւնը յանձնուած է մի Հոգաբարձութեան , որ 12 անդամներէ կը բաղկանայ ընդ նախագահութեամբ վիճակաւոր Առաջնորդին , Հոգաբարձութեան ընտրութիւնը կը հաստատուի մէն մի թաղի չորս երեսփոխանաց գաղանի քուարկութեամբ եւ կը վաւերանայ Ս . Էջմիածնի Սինոդէն . Հոգաբարձութեան որոշեալ ջրջանը չորս տարի կը տեւէ , բայց իւրաքանչիւր տարւոյ ջրջանի համարատուութիւնը վաւերացմամբ վիճակաւոր Առաջնորդին , կը ներկայանայ Էջմիածնի Սինոդին , աշակերտաց թիւն է 300 , 25 ը միայն գիշերօթիկ , ուր կ'աւանդեն Հայերէն Ռուսերէն և Գաղղիերէն ստորին դասերէ սխեալ , որոշեալ դասատուաց միջոցաւ , ուսմանց եղանակը և որպիսութիւնը չիկարողացանք իմանալ , որովհետեւ արձակուրդի ժամանակ էր , միայն լսեցինք որ կրօնագիտութեան և ձայնագրութեան դասերը աւելորդնելու խնդիր կար , բայց հոգաբարձուք իբրեւ աւելորդ սոյն խնդրոյն վերայ դիտողութիւն կ'ընէին : Ուսումնարանի տարեկան եկամուտն է քաղաքին անշարժ կալուածներէն , և Եկեղեցիներէ գոյացած արդիւնքը , ինչ

պէս կ'ըսեն 30 000 ռուբլի , որ միայն ուսումնարանի ծախսուց յատկացած է : Կան նաեւ այնպիսի մասնաւոր անձինք , որոնք իրենց հաշուոյն դպրոցներ բացեր են և թաշակաւոր աշակերտներ կ'ընդունին որոշեալ պայմաններով : Ինչպէս են Տէր Յակովբեանցը և այլք : Տիխիսի մէջ Հայերէն լեզուաւ կը հրատարակուին , Մեղու Հայաստանի , Մշակ լրագիրները , և Փորձ եռամսեայ հանդէսը իրենց գաւառական լեզուաւ : Եւ կան այնպիսի անձինք՝ որ Ռուս լեզուաւ լրագիր կը հրատարակեն , Վրացիք՝ ինչպէս յայտնի է կորսնցուցած են իրենց նախնական փառքը և ծոխութիւնը և յարած են Ռուսաց՝ կրօնակցութեան պատճառաւ , ունին մի ուսումնարան փառաւոր շէնքով , ուր կ'աւանդեն Ռուսերէն և Վրացերէն , ընդ իշխանութեամբ Էքզարխին Ռուսաց , անուանի է նոցա Սիոն մայր Եկեղեցին իւր հնութեամբ եւ սրածայր կաթողիկէիւ , յար և նման Հայոց Եկեղեցեաց կաթողիկէներուն . Եկեղեցւոյ սրմբուն վերայ կը տեսնուին ոսկեզօծ մանրանկար Վրացի թագաւորաց եւ թագուհեաց պատկերներն իրենց արքայական համազօգեստով , և Եկեղեցւոյ կեդրոնը կը տեսնուին քանի մի մարմարիոն շիրիմներ Վրացի արձանագրութեամբ , իոյէ թէ թագաւորաց կամ թագուհեաց լիցին , աւրեւմտեան կողմն յայնկոյս ճանապարհին է՝ մեծ և բարձր քարաշէն զանգակատունը , զոր Ռուսք նոր կանգնած են , ուր կախուած են բաց ՚ի մեծ և փոքր զանգակներէն , մի եւս ահագին և կարի մեծ , զոր կը հնչեցունեն ըստ սովորութեան իւրեանց . աստի շատ հեռի չէ Էկզարխի առաջնորդարանը , փառաւոր շինուած՝ ջրնապատը պարտիզով , եւ հանդէս նմին հոգեւոր կառավարութեան զիւանսատունը :

(Եւրոպական)

ՄԻԱԲԱՆԱԿԱՆ ԸՆԴՀ. ԺՈՂՈՎ.

Ս. ԱԹՈՒՌՈՅՍ

Ս. Աթոռոյս Միաբանական Ընդհ. Ժողովոյ յառաջիկայ շրջանի առաջին բացումն եղաւ Մայիս 3 ին ընդ նախագահութեամբ Ամեն. Ս. Պատրիարք Հօր: Ատեանը բացուեցաւ Ն. Սրբազնութեան ատենաբանութեամբ. յորում անցեալ շրջանի մէջ Տն. Խորհրդոյ կատարած Վարչական և առանին գործոց հակիրճ նկարագիրն ըրաւ. նոյնպէս արտաքին եւ ներքին յարաբերութեանց համառօտ պատկերը եւ Ս. Աթոռոյս ելից և մօրից վիճակը ներկայացոյց, յետ այնորիկ հրապարակական շնորհակալութիւն յայտնեց Մայր — Աթոռոյ Գահակալ Վեհափառ Կաթողիկոսին, Պօլսոյ Ամեն. Ս. Պատրիարքին և Աղգ. Կէդրոնական բարեխնամ Վարչութեան, որք զգալով Ս. Աթոռոյս նեղ և անցուկ վիճակը ՚ի հարկին իրենց ջանքը և քաջալերութիւնը երբէք չեն խնայած: Ապա տագնապալիր ժամանակի պարագայները բացատրելով՝ Ընդհ. Ժողովոյ խորին ուշադրութիւնը հրաւիրեց Գիւանին մէջ եղած խնդրոց վերայ, որք էին Տն. Խորհրդոյ տարեկան համարատուութիւն, ընտրութիւն նոր Տն. Խորհրդոյ, օրինական ծրագրի միքնութիւն եւ հաստատութիւն եւ 1877—1878 ամի Ս. Աթոռոյս պիւճէի քննութիւն: Հուսկ ապա կիբեց խօսքը ընդհանուր պաշտօնէից շնորհակալութիւն յայտնելով և Աստուծոյ նախախնամական օգնութիւնը խնդրելով:

ԱՏԱՆԱՅԻՆ

Ապրիլ 24 ամսաթուով հետեւեալը կը գրեն. «Արդէն Հաճնցի ազգայնոյ մի տարապարտ մահը գրած էի. այս անգամ եւս մարգասպանին ստացած Ռեճ պատիժը գրեմ: Մէկը չը մեռնի, մեռնելէն յետոյ այլ ևս չը վերագառնար. Կառավարութիւնը զմարդասպանը միայն առ ժամանակ մի բանտարկելով բաւականացաւ. այժմ արձակուած է. . . եթէ այս ըլլայ մարգասպաններու պատիժը, աշխարհ ոճրագործներու որջ կ'ըլլայ:

Այս օրերս տեղոյս Հայք կամուր գրուելու համար դրօշակ բացին, և առաջին անգամ դրօշը մեր Եկեղեցւոյ բակը ծածանեցաւ. հարիւրապետը Բալուցի Նիկողոս անուն կորովի Հայ մ'է, որոյ հրամանատարութեան առի շատերը գրուեցան և կը գրուին տակաւին: Սոյն Հայագունորը ասկէ 3—4 օր առաջ հանդերձ դպրոցական աշակերտներով եւ վտրժապետներով Կառավարութեան պալատը գնաց, ուրանօր մի փառաւոր հանդէս տեղի ունեցաւ. Կուսակալն եւ բոլոր պաշտօնակալք ներկայ էին, Հայ կամաւորաց դրօշը պալատ մտած պահուն ՚ի պատիւ ազգիս զինուորական հռչական դիմաւորեց: Հանդեսէն վերջը դարձեալ մուղիբայով և տաճկական կամաւորաց գունատերու ընկերակցութեամբ Հայ — գունտը քաղաքին մէջ մեծ պտոյտ մի ընելով՝ իրեն սահմանեալ տեղը գնաց. հուսկ ապա հանդէսը վերջացաւ: Այս մասին ամեն տաճիկ անհատի ուրախութիւնն ու շնորհակալութիւնը բացատրել անկարելի է:

Կիլիկիոյ խորեր լինչ անցք կանցնին այս պահուն չեմք գիտեր. տեղեկու-

Թիւններ առնելու եւ ճշդիւ գրելու համար պէտք է մէկը, որ անձնուիրաբար շրջագայի եւ ամեն աղէտներն թէ՛ բարոյական եւ թէ՛ նիւթական, աչքով տեսնէ եւ ձեռքով շօշափէ. այժմ այս չափը միայն կարելի է ըսել, քանի որ Ատանայի նման վաճառականութեամբ բաւականաչափ բարգաւաճեալ քաղաք մի այսքան կը տառապակրի, քանի՞ն առաւել ուրիշ ստորին տեղեր:



ԺԱՄԱՆԱԿԱԳՐԱԿԱՆՔ

Անցեալ ամսոյ մէջ քաղաքիս Ա. սորոց Գեր. Ապտ-իւլ-նուր Եպիս. պիսկոպոսը վախճանեցաւ ՚ի հասակի գրեթէ իննսուն ամաց: Յիշեալը 30 տարիէ ՚ի վեր է որ այստեղ Եպիսկոպոսական պաշտօնը կը վարէր. Հինդ-կաստանի իրենց աղագայիները այցելութեամբ միտմարած է եւ անոնց նուիրատուութեամբ վանքին մէջ շատ նորոգութիւններ ըրեր ու բաւական կաշուածներ աւելցուցած է: Ս. Ա. Թուոյս կողմէն հարկ եղած անձինքը ղրկուեցան նորա յուզորկաւորութեան համար, որ կատարուեցաւ թէ՛ ըստ մեր եւ թէ՛ ըստ իրենց ծիսից:

— Ամսոյս սկիզբները Եւրոպացի ճանապարհորդ մի Բեթղէհէմի ճանապարհին վերայ սեւամորթի մը դիակ տեսնելով՝ տեղական Կառավարութեան լուր կը տայ: Եղած քննութիւններէն յայտնուեցաւ, որ սպանեալը դաշոյնի հարուածով մեռած է. որովհետեւ ձախ ուսին վերայ վէրք մի ունի եղեր: Դիակին գտնուած տեղը արեան հետք տեսնուած չէ, մարմնոյն մէկ կողմը բացուած է եղեր, թերեւս վայրի կենդանիներ պատռեր են. ըսպանուելէ յետոյ, երեսի մորթը հա-

նուած է: Այս ամեն պարագայներէն հետեւեցուցած են որ մէկ չաքաթ առաջ սպաննուած է: Այս դիակը Զապթիէի դիակ մի ըլլալը ստուգուեցաւ, որովհետեւ սորա անյայտանալէն մի քանի սր յետոյ Զապթիէներու յիսնապետներէն մէկը՝ որոց առանին ըսպասաւորութիւն կ'ընէ եղեր սպաննեալը՝ ոստիկանութեան տեսչին յայտնած է, որ Զապթիէն իւր տունէն բաւական կահ կարասիք գողնալով փախած է. այս պատճառաւ յիշեալ յիսնապետը իբրեւ կատկածաւոր քրննութեան ենթարկուեցաւ:

— Ամսոյս 1 ին Յոպպէ ելաւ Քաղաքիս նորընտիր Կառավարիչ Վսեմ. Բաուֆ փաշան. երկրորդ օրը տեղս ժամանեց մեծ հանդիսիւ եւ ընկերակցութեամբ պաշտօնաւոր անձանց, վանքերու կողմէն ղրկուած Եպիսկոպոսաց եւ Թարգմանաց, նոյնպէս Հիւպատոսաց Թարգմաններու եւ պահակներու: 4 ին Հրովարտակր կարգացուելով՝ պաշտօնական այցելութիւններն եղան:

— 5 ին նախորդ Կառավարիչը մեկնեցաւ:

— 12 ին Յորդանանու ճանապարհին վերայ քաղաքացի ջորեպան մի կողոպտուեցաւ Պեթէլէիէն: Յիշեալ ջորեպանը չորս գրասգ ցորեն բեռցած քաղաք կը բերէ: Արապները կը յարձակին, կենդանիները կ'առնեն հանդերձ բեռներով, նոյնպէս ջորեպանը կը կողոպտեն եւ վերայի հանդերձները կ'առնեն, երբ կը խնդրէ գոնէ ըսթերը թողուլ, դէմքին հարուած մի տալով՝ կը մեկնին:

— Յորդանանու կողմի Արապներու կռիւը դրած էինք Մարտի ամսաթերթով. այժմ ղինադադար ըրած են հնձոց պատճառաւ: Թերեւս հունձէն յետոյ վերստին սկսին:

ՊԱՐՈՒՆԱԿՈՒԹԻՒՆ

Կարեւորութիւնն ուսման Ս. Գրոց. (Շարունակելի) .	97-101
Աստղագիտական. — Փայլածու	102-105
Առ վարդն	105-106
Մարդ. — Արտաքին մարդ. (Շար. և վերջ) . . .	106-111
Բնագիտութեան և Տիեզերագրութեան վրայ պարզ խօսակցութիւն. (Շարունակելի) . . .	111-114
Ուղեւորութիւն Նի Ս. Էջմիածին. (Շարունակելի) .	114-118
Միաբանական Բնդհանուր Ժողով Ս. Աթոռոյս.	-119
Ատանայէն	119-120
ԺԱՄԱՆԱԿԱԳՐԱԿԱՆՔ	-120

ԲԱԺԱՆՈՐԴԱԴՐՈՒԹԵԱՆ ՊԱՅՄԱՆՔ

- Ա. Սիօնը ամէն ամիս կը հրատարակուի 24 երեսէ բաղկացեալ մէկուկէս
ութածաղ լիզմով :
- Բ. Տարեկան դինն է երկու արծաթ Մէճիտիէ, Զանապարհի ծախքով
միասին, կանխիկ վճարելի :
- Գ. Զատ տետրակ առնել աւելիցը պէտք է ամեն մէկ տետրին շարո դա.
հեկան վճարէ :